



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԺԳ. Տարիք - Հոկտեմբեր 1938 14^{me} Année - Octobre 1938

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Ոչխար	Յ. Ն. Ղ.
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Անթուամ պատկը	Թրգմ. Ն. Մ.
— Ծառայութեան հոգին — Ճշմարիտ Ս. Գրքը	Թարգմանութիւն
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԻՆ — Պարտեզ մը առանց ցանկի — Նորին տիկնութեան ճամբայ ըրէք — Բոլորովին փոխուած — Ժամանակին յարմար հարցում մը — Նշանաբան մը ինքնաշարժ քշողներուն համար	Հասարակ Վեր. Ժ. Կ. Պ.
ԵՐՋԱՆԻԿ ՅՈՅՍԸ — Բրիտտոնի եկեղեցին եւ անոր ապագան	Վեր. Պ. Ս. Ակիւլեան
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Եօթը տնտեսութիւնները	Scofieldէն
ՊԱՏՄԱԿԱՆ — Մեծ դէմքեր ու դէպքեր Հայոց հաւատոյ ընտանիքէն.	Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
Մի վախճար, միայն թէ հաւատա	Վեր. Յ. Եղիազարեան
ՊԱՏԱՆԵԱՅ — Շոգեկառքը ինչո՞ւ կեցաւ	Թրգմ. Յ. Բ.
ՄԱՆԿԱՆՅ — Վազանձի թղթակցութիւն	Սամուէլ Պ.
ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ	Զ. Բ. Պոտաքեան
ԵՐԳ — Յիսուսի փառախին մէջ	Ն. Մ.



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու սլաշտօնածերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաք կրղզան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ ֆրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, ռատի Տշմարիտ «Բան»-ին
ներկայացուցիչն ալ ջճանչնար ու եւ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք ֆրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսաթերթը կը հրատարակուի Մարսէյի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական ժարմնին անդամներն են
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ս. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈԻՏԱՔԵԱՆ
Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Ս. ՊԱԳԳԱՆԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐՐԱԶՍԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելին ֆրիստոսով:
Յօդուածաշարքեր միեւնի որ ամբողջութիւնով խմբագրութեան
ծեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնով գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապակելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապալու համար:

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԴԻՆ Է —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20 ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
ՀԵՏԵԻԵԱԼ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածներ ղրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
խիկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արթնցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:


Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Երբ. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1958

ԹԻԻ 10



Ի՞նչ են հատատացեալները



Ո Չ Խ Ա Ր

Իմ ոչխարներս իմ ձայնիս կը
լսեն ...ու իմ ետեւէս կուգան:
Յովհ. Ժ 27

ԱՆԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ համար տրուած այս անունը
քիչ մը կը տարբերի անոնցմէ, զորոնք
ուսումնասիրեցինք մինչեւ հիմա:

Ի՞նչ գեղեցիկ է Քրիստոսի աշակերտ ըլլալը:
Ո՛վ չուզեր աշխարհի լոյս, երկրի աղբիւր ըլլալ եւ այլն,
բայց ոչխար, ... ամեն մարդ չուզեր ըլլալ, այդ
անունը ամեն մարդ իր վրայ առնել չուզեր,
ընդհակառակն կ'ըմբոստանայ, կ'ընդվզի անոր
դէմ, քանզի ոչխար բառը հոմանիշ է տխմարու-
թեան, անկարողութեան, անճարակութեան, պար-
տութեան: Ու բնական մարդու ներքին իղձերն
ու ուժերը կ'ընդդիմանան ասոր:

Թերեւս այս է պատճառը, որ շատ մը հա-
մոգութեան ետ կը մնան, չեն յանձնուիր, չեն
ապաշխարեր: Քանզի հին մարդը չուզեր բնա-
լինքդինքը անկարող զգալ. ընդհակառակն կ'ուզէ
ցոյց տալ թէ բան մը կ'ընայ, բան մը գիտէ, բան
մը կ'ուզէ ընել ու ասանկով դեռ կը մնայ հոն, կը
մնայ անապաշխար, մեղքի ու թշուառութեան
մէջ: Նոյնպէս այս ըլլալու է պատճառը որ շատ
մը ապաշխարածներ տարիներով դեռ կը մնան
նոյն տեղը, ուր սկսած էին: Անոնք կ'ուզեն բան
մը ընել Յիսուսի համար, վիճաբանիլ, փաստել,
քարոզել, կազմակերպել, գործել, վազել, երեւիլ,
առանց միտք բերելու «Առանց ինծի բան մը
չէք կրնար ընել»ը: Չեն ուզեր երբեք մօտենալ
Պօղոսի գաղտնիքին «Ա՛լ չէ թէ ես կ'ապրիմ
հապա Քրիստոս կ'ապրի իմ մէջս»:

Աշխարհ ալ ուրախ է որ մենք «ոչխար» կը
կոչուինք. ու իրեն իրաւունք կը համարի մեզի

հետ որպէս այն վերաբերուիլ ըսելով. «Մենք
պէտք է զարնենք և դուք պիտի համբերէք,
մենք պէտք է անիրաւունք եւ դուք չպիտի
բողոքէք, մենք պիտի նախատենք զձեզ բայց
դուք ինքզինքնիդ չպիտի պաշտպանէք. մեզի
անբարիշտներուս այսպէս կը վայելէ, բայց դուք
ոչխար էք: Մենք ազատ ենք դատելու, հայհո-
յելու, անիրաւելու, — օ՛հ ի՞նչ աղուոր է անապաշ-
խար ըլլալ, բայց դուք կապուած էք, օրէնքի տակ
էք, սանձի կաշիներով կաշկանդուած էք, պէտք
է հնազանդիք, պէտք է անիրաւութիւն և լռէք,
պէտք է խաչուիք, ալ ինչո՞ւ քրիստոնեայ
կոչուած էք, պէտք է ձեր Քրիստոսին նմանիք...:
Ի՛հ, աշխարհ թերեւս մասամբ մը իրաւունք
ունի:

Սակայն մեզի համար աւելի արժէքաւոր է և
էական Քրիստոսի միտքը քննել, տեղեկանալու
այս բառին ետեւ թաքնուած խորհուրդին:

Հաւատացեալին օրինակը եղող ոչխարը ան-
ձայն, հանդարտ, անմիաս կենդանի մըն է,
դիւրահաւան, դիւրաւ տեղի տուող, հնազանդ,
հետեւող, հօտը սիրող, անկէ չբաժնուող, օգտա-
կար կենդանի մըն է՝ օգտակար ողջ ատեն, օգ-
տակար մեռնելէն յետոյ: Անիկա անգէն է, բազմ
անոխակալ եւ միամիտ:

Այս բացատրութենէն քիչ մը կը հասկնանք
հաւատացեալին բնոյթը, անոր վարուեալներն
ու դիրքը աշխարհի, իր նմաններուն ու Քրիս-
տոսի հանդէպ:

ա. Հաւատացեալին բնոյթը. — Քրիստոսի

խաղաղութիւնով լեցուած, հեղ է ան, անձայն ու անփնաս: Չապրիր այն աշխարհի վրայ, հապա հոս կ'ապրի երկնային կեանքը: Քրիստոսը հազած ըլլալով, Անոր նկարագրին փոխուած է և կը փոխուի օրէ օր իր նկարագրին ալ և իր վրայ յայտնի կ'ըլլան Անոր առաքինութիւններն ու հոգւոյն բազմակողմանի պտուղը: Քրիստոս Աստուծոյ Գառն է: Աշխարհի մեղքը վերցնելու համար Անիկա խորունկ ձորերէն անցնելու էր, Անոր ոչխարը իրեն հետեւելով կ'անցնի նոյն ճամբաներէն, Քրիստոսի կրած նեղութիւններու պակասութիւնը իր մարմինին մէջ լեցնելով՝ Անոր մարմինին — եկեղեցիին համար, որպէս զի Քրիստոս անոր մէջ ձեւակերպուի հաւատքի միջոցաւ և ըլլայ հոն փառաց յոյսը:

բ. իր դիրքը աշխարհի հանդէպ. — Այս ալ որոշ է: Իր նկարագիրը ցոյց կուտայ թէ իր Փրկչին նման, ինքն ալ չկրնար աշխարհի մէջ մարդոց որդիներուն հետ աշխարհային կերպով և միջոցներով վարուի: Նա միամիտ է չարը գիտնալու: Իրենի չփնտոներ, բայց իրաւունքն ու ճշմարտութիւնը: Անիկա չվիճաբանիր և իր ձայնը լսելի չըներ, վասն զի գիտէ թէ անկէ Աստուածային օրհնութիւններ երեւան չեն գար: Աւելի դիւրին կուգայ իրեն անիրաւուի, քան անիրաւել, փնասուի քան փնասել: Անգէն է ան, ինքզինքը չպաշտպաներ մարդկային միջոցներով և աշխարհիկ կերպերով, հապա իր Տէրոջը նման ինքզինքը արդարութեամբ դատողին կը յանձնէ, կը մոռնայ անոխակալօրէն աշխարհի ըրածները իրեն հանդէպ և ջանք կ'ընէ օգտակար ըլլալ այլոց. արդէն իր գոյութիւնը աշխարհի օրհնութիւն մըն է: Աստուծոյ զաւակներ իրենց ողջութեան ժամանակ օգտակար և օրհնաբեր եղած են և կը շարունակեն ըլլալ իրենց մահէն վերջն ալ: Ո՛վ չէ ազդուած երբեք Արարհամէ, Եղիշէ, Եսայիէ, Ստեփաննոսէ, Օգոստինոսէ, Սանֆրանչիսկոսէ, Լուսէրէ, Կալվինէ, Հրտսըն Թէյլըրէ, Մուտիէ, Նարեկացիէ, Եղոյեանէ: Այո՛, անոնք կը խօսին և պիտի շարունակեն խօսիլ իրենց նմաններուն հետ մոլորած մարդկութեան ցոյց տալու ճամբան ճշմարտութիւնը և կեանքը եղող Քրիստոսը:

գ. իր դիրքը նմաններուն հանդէպ. — Շատ մտերիմ է, շատ միաբան: Ոչխարի նման առանց ընկերի ինքզինքը անհանգիստ կ'զգայ: Նոյնիսկ փարախին մէջ ընկերով քով: Հապա ճամբո՛ւն, դաշտերու մէջ տօթակէզ արեւին կիզիչ ճառագայթներուն տա՛կ, միշտ ընկերներու հետ,

անոնց շուքին տակ և անոնց շուք տալով: Չկրնար ուրիշ բան ընել, չգիտեր ուրիշ կերպ: Հասկցած է զաղտնիքը «Որպէս զի ամենն ալ մէկ ըլլան, ինչպէս Դուն, ո՛վ Հայր, Իմ մէջս և Ես Քու մէջդ, որպէս զի անոնք ալ մեր մէջ մէկ ըլլան» ին «Ուրիշ ոչխարներ ալ ունիմ, որոնք այս բակէն չեն, զանոնք ալ պէտք է որ բերեմ ու Իմ ձայնիս պիտի լսեն և պիտի ըլլան մէկ հօտ եւ մէկ հովիւ» ին: Ի՛նչ քաղցր միաբանութիւն:

դ. իր դիրքը Քրիստոսի հանդէպ. — Նորէն ոչխարի դիրքն է. բոլորովին վստահ իր երկնաւոր Հովիւին, կը հետեւի Անոր, կը քալէ Անոր ետեւէն, ուր որ Ան կ'երթայ, կը հնազանդի Անոր, կը ճանչնայ Անոր ձայնը և կը լսէ, երբ Ան իր անունը կուտայ:

Կը հնազանդի, և միշտ կը հնազանդի: Կը հնազանդի, երբ նա փարախէն ներս և դուրս կը տանի, կը հնազանդի, երբ խոտաւէտ արօտներուն մէջ կը պառկեցնէ, կամ հանդարտ ջուրերուն քով կ'առաջնորդէ անոր, կը հնազանդի երբ Հովիւը կը հրամայէ չուտել ու չխմել, կը հնազանդի երբ Հովիւը զայն գետէն անցնելու համար իր առջեւէն ջուրը կը մտնէ: Դիտողութիւն չըներ, չտրտնջեր, չբողոքեր, երբ Նա վերջապէս կ'ըսէ, «Ահա ես ձեզ կը զրկեմ իբրեւ ոչխարներ զայլերու մէջ, հնդիկներու, մահմէտականներու, արաբներու, քիւրտներու»: Կը հնազանդի Անոր, որ իր աշխարհի մէջ ապրած կեանքին բարձրագոյն նշանաբանն ըրած էր հնազանդութիւն Հօրը հանդէպ:

Չմտածեր գալիքին վրայ, չմտածեր թէ ինչպէ՞ս և ո՛ւր երթալու է, միայն կը հնազանդի: Չմտածեր թէ զայլերը ի՛նչ վերաբերում պիտի ունենան իրեն հանդէպ: Պիտի յաջողի՞ իր միսի-ոնը կատարել, պիտի յաջողի՞ զայլերը դառնուի ընել, կամ թէ պիտի խաճատուի՞, պիտի յօշոտուի՞, պիտի սպաննուի՞, ուտուի՞:

Հոգ չէ՛, հոգ չէ՛: Նա մէկ բան գիտէ. հնազանդիլ մեծ Հովուապետին, որ ըսած է, «Ես քեզ կը զրկեմ»: Կ'երթայ Գառնուկին դրօշը բարձրացնելու գայլերու ամբոցներուն վրայ և զանոնք հաւատքին հնազանդեցնելու. խնդիր չէ, եթէ իր կեանքն իսկ վրայ տայ, դեռ դրօշը չբարձրացած: Գիտէ թէ մահը վախճան չնշանակեր, ընդհակառակն սկիզբը յաւիտենական կեանքին ու չկայ մէկը որ զինքը կրնայ յափշտակել Հովիւին ձեռքէն: Ինքը հնազանդած է Անոր և իր կեանքը պահուած է Անոր քով յաւիտենապէս: Գիտէ թէ Ան խոստացած է իրեն, «Ես ձեզի հետ



ԱՆԹԱՌԱՄ ՊՍԱԿԸ

Ուստի իմ սիրելի ու բաղձալի եղբայրներս
ՓԻԼ. Դ 1

Առաքեալին ցնծութիւն կը պատճառէ հաւատաքով իր զաւակները հոգեւոր վսեմ բարձրութեանց առաջնորդել՝ ուսկից կարենան դիտել իրենց ընդարձակ ժառանգութիւնը Քրիստոսով: Կը սիրէ զանոնք հասցնել «երկնաւորներուն», որպէսզի անոնց հոգիները հրաւիրէ աւելի ջերմ նուիրման: Գրեթէ Անոր բոլոր «Ուստի»ներն ու «Ուրեմն»ները աշակերտի բարձրութիւններու վրայէն արտասանուած են: Երբ հոգիով զբախտի մէջ կ'զգանք ինքզինքնիս ու Անոր փառքը կը լեցնէ մեր սիրտն ու միտքը, Առաքեալը կամացուկ մը իր «Ուստի»ով կը մօտենայ մեզի ու կը յիշեցնէ թէ մեզի նման առանձնաշնորհեալ այրերն ու կիները ինչպիսի կեանք մը ապրելու են: Առաքեալը Փիլիպպեցի հաւատացեալները կը պտտցնէ երկնային զանձերու մէջէ ու վերին փառքը անոնց ցուցնելով կը հրահարէ անոնց հոգիները, ու մինչ անոնք սուրբ զմայլմամբ կը դիտեն երկնից փառքը, մեղմիւ կը մօտենայ անոնց իր «Ուստի»ով ու կը ջանայ անոնց ջերմ խորհուրդները աւելի զօրեղ որոշումներուն սրբազան կրակին վերածել: Սակայն նկատելու արժանի է թէ ի՞նչ շնորհալի կերպով անիկա կը մօտենայ իր բարեկամներուն: «Իմ սիրելի ու բաղձալի եղբայրներս»: Շատ մը արգարացի դիմումներ շնորհքէ զուրկ ըլլալու պատճառաւ ի դերեւելած են: Բազմաթիւ ընտիր խորհուրդներ փափկանկատութենէ զուրկ ըլլալուն համար ընդունելութիւն գտնելու փոխարէն մերժուած են: Քաղաքավարութիւնը ոչ արուեստ մըն է, ոչ ալ հնարք մը: Չենք կրնար զայն հագնիլ: Ոչ թէ գործի մը, այլ պտուղի մը նման է: Բնական ար-

դիւնք մըն է: Չի շինուիր, այլ կ'աճի: Ներքին շնորհքի արտաքին երեւոյթն է: Ճշմարտապէս քաղաքավար ըլլալու համար երկնային թագաւորին արքունիքը ապրելու և Անոր հետ սեղան նստելու է: Այս էր Պօղոսի գերբնտիր քաղաքավարութեան զաղտնիքը: Անիկա չէր կրնար տարբեր ըլլալ: Միթէ թղենիին վրայ տատասկ կ'ըլլա՞յ: Եթէ մեր վարմունքը շնորհալի չէ, պատճառը մեր էութեանց խորերը փնտռելու է:

«Իմ սիրելի»: Անիկա պարապ, սովորական ոճ մը չէ: Այս խօսքը Պօղոսի բերնին մէջ հոգի ու կեանք է: Իր էութեան խորէն սիրոյ ոյժ մը կը փոխանցէ ան անոնց՝ զոր այս ածականով կ'որակէ: Առաքեալը կարող էր իր սէրը շոյալել, քանզի սիրոյ անսահման եկամուտ մը ունէր: «Մենք կը սիրենք, ինչու որ առաջ Անիկա մեզ սիրեց»: Սիրոյ հոսանք մը կը յորդէր երկինքէն Առաքեալին սրտին մէջ ու հոն հազարաւոր ջրանցքներու վերածուելով հոսելով կ'երթար երկրի այլեայլ կողմերը ոռոգելու: Իր ընդունած գանձերով բնագոյրար ուրիշները կը հարստացնէր:

«Ու բաղձալի»: Սէրը երբէք առանձին չմնար: Անոր անբաժան ընկերն է բաղձանքը: Սէրը շարունակ կը ցանկալ որ իրենները ամէն ընտիր բան ունենան: Բարձրագոյն օրհնութիւններ կը փնտռէ անոնց համար: Արդեօք գիտե՞նք թէ որչափ կրնանք աջակցիլ ուրիշներուն, անոնց ծառայելու բաղձանքն անգամ ունենալու: Այսպիսի բաղձանք մը յամր ու դանդաղ քայլերով չյառաջանար: Հաստատապէս կը հաւատամ թէ ամէն սրբազան փափաք կը բարձրացնէ իր բաղձանքի առարկան: Երբ լաւ բաղձանքներով կը մօտենանք անհատներուն՝ անոնց զօրութիւնը կը մօտենանք: Որ և է հոգեւոր ոյժ անկարող չի մնար: Նուիրական բաղձանք մը թեւեր ունի ու Աստուածային բարձրացման կը ծառայէ: Երանի այն մարդոց, որոնց վրայ կը հանգչին Պօղոս Առաքեալի բաղձանքները:

«Իմ ուրախութիւնս»: Ասկէ առաջ տեսանք անգամ մը թէ ինչպէս ուրիշներու յաղթութիւնը ուրախութիւն կը պատճառէ Առաքեալին: Երբ մեզմէ սէր կը հոսի դէպի ուրիշները ու մեր բաղձանքները անոնց վրան կը հանգչին, անոնց բարօրութեան երեւոյթները կ'աւելցնեն մեր ուրախութիւնը: Փիլիպպէի մէջ այրեր ու կիներ կային, որ Պօղոսի աչքերուն առջեւ խաւարէն լոյսի, ու չոր անապատէն ջրաբեր երկրի փոխադրուած էին: Ան լսած էր անոնց ցնծութեան երգերը: Լսած էր անոնց հիացման աղաղակները, երբ անոնք շնորհաց նոր նոր գիւտեր ըրած

(Շարունակութիւն նախորդ էջէն)

եմ, մինչեւ աշխարհի վերջը և իր ցուպովն ու զաւազանովը զինքը կը մխիթարէ:

Ի՞նչ գեղեցիկ անուն. Յիսուսի ոչխար:

Իմ ոչխարներս...: Եւ ես յաւիտենական կեանք կուտամ և մէկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք:

Յ. Ն. Ղ.

էին: Անոնց երգերը աւելցուցած էին իր երգերը, անոնց հիացումը խորացուցած էր իր հիացումը ու անոնց ուրախութիւնը իրեն ցնծութիւն առթած էր:

«Ու պսակա»: Ասիկա թագաւորի մը կամ քահանայի մը թագը չէ, այլ յաղթական ըմբիշի մը շահած պսակը: Յաղթութեան ու զուարճութեան նշանակն է: Ասիկա աշխարհի թառամող պսակներուն չէր ցանկար: Սակայն ասիկա պսակ մըն էր, որ ան թէ կեանքի և թէ մահուան մէջ կրնար կրել, պսակ մը որ յաւիտեան անթառամ ու չքնաղ կը մնար: Ու երբ Փիլիպպէցիները փառքի մէջ յայտնուին, ինք ալ անոնց հետ փառքով պիտի յայտնուի:

«Ասանկ հաստատուն կեցէք Տէրոջմով»: Ահա դիմումը, որուն կ'առաջնորդեն վերը յիշուած սէրը, շնորհքը ու քաղաքավարութիւնը: Եթէ երկնային քաղաքացիութեան այս մեծ փառքը կրնայ քուկդ ըլլալ, աճապարէ քայլերդ երկինքի ճամբուն վրայ հաստատելու: Մի հետեւիր փոփոխական երեւոյթներու: Հաստատուն կեցիր Տէրոջմով: Խորհուրդներդ Անոր վրայ բեւեռէ: Հաւատքդ թող Անոր վրայ հանգչի: Մի թողուր որ որ և է բան քու ուշադրութիւնդ Անոր վրայէն վերցնէ: Մի արտօնեք որ ոյժերուդ ամենէն փոքրիկն իսկ Անոր ծառայութիւնէն հեռանայ: Թող ամէն ինչ որ քու մէջդ է, օրհնէ ու փառաւորէ Անոր սուրբ անունը:

Թարգմ. Ն. Մ.

ՇԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Երիտասարդութեանս ատեն պատմութիւն մը կարդացի, որ ամբողջ կեանքիս վրայ ազդած է: Քաղաքի մը մէջ անհաւատ դարբին մը կար, որուն սիրտը երկաթը դարբնած սալին չափ կարծր էր: Ասիկա հայհոյիչ մէկն էր, բայց ոչ ոք կը համարձակէր զայն յանդիմանել: Սակայն դրացի գիւղի մը մէջ մարդ մը կար որ անոր համար շարունակ կ'աղօթէր: Օր մը աւելի երկար չկրնալով սպասել, առտուն կանուխէն ձի հեծաւ երթալ զայն տեսնելու համար: Երբ եկաւ, դարբինը գործի վրայ էր, բայց երբ մարդը անոր աշխատանոցին դռան առջեւ կեցաւ, անկարող եղաւ իր պատգամը տալու: Ինչ որ կրցաւ ընել, կակազելով հետեւեալ խօսքերը ըսելն էր. «Եկած եմ ձեզի ըսելու որ ձեր հոգիին համար տաղնա-

պի մէջ եմ»: Յետոյ բարձրաձայն շալով, դարձաւ ձին հեծաւ ու գնաց:

Երբ դարբինը ճաշի նստաւ, շատ մտադրաղ երեւոյթ մը ունէր. կինը ատոր պատճառը հարցուց. «Ահա՛, ըսաւ ան, այս առտու այդքան մը ցուրտ օդին, մարդ մը եկաւ ինծի ըսելու թէ իմ հոգիիս համար տաղնապի մէջ է. կը կարծեմ թէ ժամանակն է որ ես ալ այդ մասին մտահոգուիմ»:

Ան ինքզինք Տէրոջը յանձնեց և փրկութիւն գտաւ:

Եթէ դուք այս հոգիով կը գործէք, Տէրը ձեր ջանքերը պիտի վարձատրէ: (Թրգմ.)

ՃԵՄԱՐԻՑ ՍՈՒՐԲ ԳԻՐԳԸ

Աւետարանիչ մը, յոգնեցուցիչ օրուն մը իրիկունը մինչ անկողին երթալու կը պատրաստուէր, մարդ մը խնդրեց իր հետ խօսակցութիւն մը ունենալ: Ասիկա անցեալին ամենաինկած և գէշ կեանք ապրող մէկն էր, որ օրինակելի քրիստոնեայ մը դարձած էր:

Քիչ մը ատեն խօսելէ ետք, միսիոնարը ըսաւ անոր որ Ս. Գիրք մը տայ իր հին ընկերներէն մէկին:

— Ոչ, պատասխանեց մարդը, անիկա Սուրբ Գրքի պէտք չունի:

— Ինչո՞ւ ոչ:

— Ասիկա անոր ոչ մէկ օգտակարութիւն պիտի ունենար:

— Բայց ինչո՞ւ:

— Սուրբ Գիրքը, Աստուծոյ շնորհքով, ձեր Ս. Գիրքն է և իմ Ս. Գիրքս է, բայց անոր համար Ասիկա ոչինչ է: Ասիկա տակաւին այդ տեղ եկած չէ:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, հարցուց Աւետարանիչը:

— Պարզապէս ըսել կ'ուզեմ թէ առայժմ դուք էք անոր Ս. Գիրքը: Ասիկա ուրիշ Սուրբ Գիրք չգիտեք և չհասկնար: Ասիկա ձեզի է որ կը նայի, եթէ դուք սխալի մէջ գտնուիք, Քրիստոս սխալ է և այլեւս անոր համար արժէք չունի: Ձեր կեանքը ինչ որ է՝ Քրիստոսն է որ կը ներկայացնէ անոր, ձեզմով է որ Քրիստոս անոր յայտնի կ'ըլլայ:

Այդ գիշերը, կը պատմէ Աւետարանիչը, չկրցի քնանալ հակառակ այդքան մը յոգնած ըլլալու:

Յաճախ հրապարակաւ և առանձին նախատուած էի, ատոնցմէ և ոչ մէկը զիս խոտոված էր, բայց այդ խօսակցութիւնը մինչեւ լոյս զիս անհանգիստ ըրաւ: Ի՞նչպիսի մեծ պատասխանատուութիւն:

Թարգմ. Ի. Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՑ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ՊԱՐՏԷՉ ՄԸ ԱՌԱՆՑ ՑԱՆԿԻ

Ֆիւլպըն գիւղաքաղաքին ուսուցիչը Պրն. Գրիսթիան Գուլընի սպասուհին առտուն կանուխ սանդուխներէն վար կ'իջնէր, ախոռին գործը տեսնելու համար: Նա շատ զարմացաւ երբ տեսաւ թէ հակառակ այսքան կանուխ ըլլալուն նստելու սենեակին դրան ձեղքէն լոյս կը տեսնուէր: Ասիկա քանի մը օրէ ի վեր իր ուշադրութիւնը գրաւած ըլլալով իրեն զարմանք պատճառով այս բանը հասկնալու նպատակաւ այս անգամ դուռը կամացուկ մը բացաւ և տեսաւ որ բաց Ս. Գրքին առջեւ իր տեղը Պրն. Գուլըն կը նստէր: Առաւօտեան լոռութեանը մէջ սենեակը խաղաղութիւն մը լեցուցած էր: Սպասուհին կամաց մը դուռը ետ քաշեց, բայց ուզեց կէսօրուան ճաշին այս մասին հարցնել: Նա զիտէր թէ իր տէրը ուսուցիչ մը ըլլալէն ի զատ երկրագործ էր, եկեղեցիի դաշնակահարը, պատուելիին փոխանորդը և ամեն բանէն առաջ Ֆիւլպընի հոգեւոր շրջանակին առաջնորդն էր: Սպասուհին ըսաւ. «Դուք քունի շատ պէտք ունիք, ես կուզեմ հասկնալ թէ դուք ինչո՞ւ համար այսքան կանուխ կ'ելլէք և աղօթելով Ս. Գրքին առջեւ կը նստիք»:

Նա սա բացատրութիւնը տուաւ, «Սիրտ մը առանց աղօթքի, կը նմանի օրն ի բուն առանց ցանկի պարտէզի մը որուն մէջ կրնան մտնել պարտէզը պարտէզը հաւերը, եւայլն, բայց եթէ պարտէզը ցանկ մը ունի, այն ատեն հաւերը մինչեւ ցանկը կուգան և անկէ ներս չեն կրնար մտնել ու պարտէզը ապահով կը մնայ: Սրտին պարտէզն ալ լաւ ցանկի մը պէտք ունի: Ով որ առաւօտուն Աստուծոյ ներկայութեանը մէջ կը

մտնէ, նա օրն ի բուն պատրաստուած կ'ըլլայ դուրսէն գալիք բոլոր վտանգներու և փորձութիւններու դէմ»:

«Արթուն կեցէք և աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք»: Մատ. ԻՉ 41:



ՆՈՐԻՆ ՏԻԿՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՅ ԸՐԷՔ

Հոչակաւոր Բօլանտ Հիլ Անգլիոյ մէջ մեծ բազմութիւններու կը խօսէր: Օր մը պողոտային և մարգագետինն վրայ բազմութիւնը այնքան խիտ էր որ տիկինի մը կառքը անցած ատեն տեղ չկար: Ասոր վրայ կառապանները պողոտային. «Նորին տիկնութեան ճամբայ ըրէք»: Ժողովուրդը ձիերուն առջեւ ցրուեցաւ: Սակայն քարոզիչը կառքին առջեւը կայնեցաւ եւ իր խօսքը տիկինին ուղղելով ըսաւ, «Տիկին, քու հոգիիդ համար աճուրդ կ'ըլլայ, Սատանան զին կը մատուցանէ, աշխարհը զին մը կ'առաջարկէ»: Ապա խօսեցաւ թէ անոնցմէ իւրաքանչիւրին մատուցած հաճոյքը կարճ ժամանակի մը համար է և անկէ շարունակեց, «Բայց Տէր Յիսուս ալ կը մատուցանէ քու հոգիիդ համար» և պատմեց թէ Փրկիչը ի՞նչպէս իր կեանքն ու արիւնը տուաւ իրեն համար և իրեն յաւիտենական կեանք մատուց:

Երբ նա կը խօսէր, տիկինը շատ յուզուած էր և Ս. Հոգին իրեն կը խօսէր քարոզիչին խօսքերովը, այնպէս որ նա իր կառքէն իջաւ և ճամբուն վրայ ծունկի եկաւ և ինքզինքը ու իր ունեցածը Աստուծոյ տուաւ:

Օրհնեալ ճամբորդութիւն, օրհնեալ հանդիպում: Այս պատմութիւնը մեզի յիշել կուտայ եթովպացի ներքինիին ու Սողոմոն ճամբորդութեան ընթացքին Տէր Յիսուսի հանդիպումները և ուրախալի հետեւանքը:



ԲՈԼՈՐՈՎԻՆ ՓՈՒՈՒԱԾ

Չինաստանի Գան Սու նահանգին մէջ չինացի միսիոնար բժիշկ Տօքթ. Գաօ մերթ ընդ մերթ միսիոնարական ճամբորդութիւններ ալ կ'ընէր: Անգամ մը պանդոկի (խան) մը բակին մէջ զինուորի մը իր ձիուն հետ ունեցած խօսակցութիւնը ունկընդրեց առանց անոր իմանալուն: Տօքթ. Գաօ զինուորը կը ճանչնար, նա բաւական ատենէ ի վեր իր ունկընդիրներէն մէկն էր ու մեծ հետաքրքրութեամբ Յիսուսի մասին տըր-

ուած բարի լուրին մտիկ կ'ընէր: Բայց նա իր հանդարտ բնավորութեանը պատճառաւ իր ներքին փոփոխութեանը մասին ո եւ է բան մը յիշած չէր, սակայն իր ձին այս բանը կրնար զգացած ըլլալ: Քանզի գինուորը իր ձին խողանակելու պահուն երբ անիկա դժուարութիւն կուտար, անոր ըսաւ, «Դուն լաւ գիտես թէ քրիստոնեայ ըլլալէս առաջ ի՞նչպէս էի, գիտես թէ առաջ երբ այսպէս անհանդարտ կ'ըլլայիր քեզի ինչպէս կը զարնէի և կը հայհոյէի, հիմա չե՞ս տեսներ թէ ինչպէս փոխուած եմ: Եկուր հիմա, պէտք է որ դուն ալ փոխուիս և սորվիս ուրիշ կերպով վարուիլ»:

«Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, անիկա նոր ստեղծուած մըն է, հիները անցան և ահա ամենքան նոր եղաւ»: Բ. Կորնթ. Ե. 17:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅԱՐՄԱՐ ՀԱՐՅՈՒՄ ՄԸ

Վերջերս Սկովաիական թերթ մը ժողովուրդը դէպի կրօնք յետս կոչելու Գէմփէյնին հետեւեալ կերպով օգնեց: Թերթին զանազան էջերուն մէջ ընթերցողներուն կրկին ու կրկին ըսուած էր թէ վերջին էջին վրայ նային: Ընթերցողները հետաքրքիր վերջին էջը բացին, հոն հետեւեալ բառերուն հանդիպեցան, «Այս է այն տեղը ուր դուն զԱստուած կը տեղաւորես: Քու կեանքիդ վերջին էջին վրայ»:

Ատենն է որ մենք ալ այս հարցումին առջեւը գանք ու մեր պատասխանները տանք, մինչ տակաւին կեանք և պատեհութիւն ունինք: «Տէրը փնտռեցէք, քանի որ անիկա կը գտնուի»: Առաջ խնդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և Անոր արդարութիւնը»:

ՆՇԱՆԱԲԱՆ ՄԸ ԻՆՔՆԱՇԱՐԺ ԲՇՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Միացեալ Նահանգներու մէջ քրիստոնեայ տիկին մը ինքնաշարժ քշել սորված ատեն հետեւեալ բառերը գրեց, «Ճամբայ ելլելու ատեն աղօթէ, վախճանին փառք տուր» և այս նշանաբանը իր ինքնաշարժին ապակիին վրայ փակցուց: Այս գաղափարը ընդունելութիւն գտաւ և հազարաւոր քարդերու տպուկութիւն առաջնորդեց ու բոլոր Սիթթիլի և խաղաղականի հիւսիսային արեւմտեան կողմերը ցրուեցան: Մօթօր գործածող քրիստոնեաներու համար ի՞նչ յարմար

նշանաբան մ'է ու միեւնոյն ատեն Քրիստոսի համար շատերուն վկայելու պատեհութիւն մը: Այս լէյտին իր նշանաբանը յայտնելէն ամէնցած չէր եւ իր այս գործողութիւնը շատ մը ուրիշները իրեն պէս ընելու առաջնորդեց:

Ով ընթերցող, դուն ալ եթէ հեծանիւ մը կամ ո եւ է մօթօր մը կը քշես, կամ գործարանի մը մէջ շարժիչ մեքենայի մը առջեւ կը գործես եւ կամ արեւմտեան մեծ քաղաքներու փողոցներու մէջ կերթեակես, քու ձեռքդ մօթօրիդ կամ մեքենայիդ վրայ չղրած եւ կամ տանդ դռնէն չեկած ԱՂԹԻ ու գործիդ կամ ճամբորդութեանդ վախճանին ՓԱՌՔ ՏՈՒՐ:

Հաւաքեց՝ Ժ. Կ. Պ.



ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՒ ԱՆՈՐ ԱՊԱԳԱՆ

Մաթ. Ժ2 13-18

Եօթը տարի առաջ Նիւ-Եորք քաղաքին մէջ շէնք մը շինուեցաւ «Եկեղեցի» անունով, չորս ու կէս միլիոն տօլար ծախսով: Շէնքին զեղեցիկութիւններէն մէկ մասն ալ, անցեալին մէջ ապրած և իրենց սատանայական, մոլորեցուցիչ և կործանիչ վարդապետութիւններովը միլիոնաւորները կործանումի առաջնորդած պիղծ «կրօնքի» առաջնորդներուն պատկերները կը կազմեն: Ասոնց շարքին դրուած է Աստուծոյ Միածին Որդւոյն Յիսուս Քրիստոսի պատկերն ալ, «որ է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս, ամէն»: Այս «Եկեղեցի»ին քարոզիչն է Հէրի Էմերսըն Ֆօլտիք, որ չհաւատար Քրիստոսի կուսածնդեան, Անոր Աստուածութեան, Անոր արեան քաւութեան և ոչ ալ Անոր մարմինով յարութեան: Ինք աստուած մը ունի, բայց ոչ թէ Սբ. Գիւրգիս Աստուածը: Ինքը գորաւոր կերպով կը հաւատայ թէ իր նախահայրը վերջապէս կապիկ մը եղած ըլլալու է, չհաւատալով Աստուծոյ խօսքին մէջ եղած ստեղծագործութեան արձանագրութեան:

Այս Յարութեան Զատիկին, ամէն կողմէն Աստուծոյ խօսքին հաւատարիմ՝ պաշտօնեաները թէ իրենց բեմերէն և թէ բառիօյի զանազան կեդրոններէն կը բարձրացնէին իրենց Փրկիչը, ուրախութեամբ կ'աւետէին Անոր մեզի համար

խաչին վրայ կատարած այդ մեծ և անզուգական փրկութեան պատարագը, և Անոր գերեզմանէն յարութիւնը, և այսպէս ամէն տեղ ճշմարիտ հաւատացեալներուն սիրտը ուրախութեամբ լեցուած էր: Սակայն ժամը 4ին էր, երբ բատիօյի բանալին դարձուցի, ահա Ֆոզտիքը կը խօսէր Քրիստոսի յարութեան յիշատակին առթիւ, բայց Անոր Սուրբ անունը չյիշեց, յարութիւն բառը բերանը չառաւ, սակայն շատ մը ոչ Սուրբ Գրային գաղափարներ յայտնեց ու աւելցուց թէ «Զատիկին դէպքը առաջինը չէր որ Պաղեստինի մէջ տեղի ունեցաւ, հապա անկէ առաջ նոյն դէպքը Սոկրատի և իր աշակերտներուն մէջն ալ տեղի ունեցաւ»: Տարակոյս չկայ որ Ֆոզտիքին մտքին մէջ սա կար թէ՛ Սոկրատ և իր աշակերտները, որոնցմէ ամենէն երեւելին Պատոմոն էր, ըսին թէ «Մարդուն հոգին չմեռնիր»: Ահա այս է Ֆոզտիքին ըսածը թէ՛ Յիսուս մեռաւ և Անոր աշակերտները ոչ թէ զԱյն մարմինով յարութիւն առած տեսան, հապա Զատիկին առտուն իրենք այնպէս խորհեցան որ Յիսուսի հոգին կ'ապրի, Անիկա յարութիւն առաւ ոչ թէ մարմնապէս, այլ հոգեպէս, ինչպէս Սոկրատ և իր աշակերտները հաւատացին թէ, մարդուս վախճանը մահը չէ, հապա հոգին յաւիտեան կ'ապրի, նոյն խորհուրդը Յիսուսի աշակերտները ունեցան Անոր յաւիտեանական կեանքին վրայ: Բայց սա յայտնի ըլլալ թէ Սոկրատի և իր աշակերտներուն ապրած ժամանակը իրենց փիլիսոփայութեան և գիտութեան ամենէն փայլուն եղած ատենը անգամ Աթենացիք բարոյապէս ստորին և փճացած ժողովուրդ մըն էին: Ֆոզտիքին բոլոր ջանքը այս է որ Քրիստոսի մարմինը գերեզմանին մէջ թողու. նոյն փափաքը սատանան ունենալով կնքել տուաւ Անոր գերեզմանը, աշխարհի ամենամեծ կառավարութեան կնիքով. բայց կը փառաւորենք Անոր Սուրբ անունը, որ մահը կարող չեղաւ զԱյն գերեզմանին մէջ պահել. Գործք. Բ 24. «Եւ նոյն օրը, Մէկշաբթի իրիկունը, աշակերտներուն ժողովուած տեղին դռները դռը ըլլալով՝ հրեաներէն վախճանուին համար, Յիսուս եկաւ անոնց մէջ տեղը կայնեցաւ ու ըսաւ անոնց, խաղաղութիւն ձեզի, և զայս ըսելով իր ձեռքերը ու կողը ցուցուց անոնց. աշակերտներն ալ ուրախացան, երբ Տէրը տեսան». Յով. Ի 19, 20, 24-29: Պիտի վայ այն օրը, որուն մէջ Ֆոզտիք և իրեն պէս Քրիստոսի խաչին թշնամիները պիտի կայնին Անոր առջեւ: Ահա ասոնք ալ վերջին օրուան նշաններէն են, փառաւոր շէնքերու մէջ և պերճախօս, բայց անհաւատ «քարոզիչներով»:

«Չար ու խաբեբայ մարդիկ մոլորեցնելով ու մոլորելով», (Բ Տիմ. Գ 13) կ'երթան դէպի յաւիտեանական կորուստ: Քրիստոսի մեռելներէն յարութեան դէպքը եկեղեցիին ողնայարն է, եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար, եկեղեցին, որ իր մարմինը կը կազմէ, գոյութիւն պիտի չունենար, և կորսուած մարդկութեան համար ալ յոյս մը պիտի չըլլար:

Ըսինք թէ, Քրիստոսի եկեղեցին քարեղէն չէնք մը չէ, բայց ան կոչուած է «Սուրբ տաճար», «Աստուծոյ բնակարան», Եփ. Բ 21, 22, «Հոգեւոր տաճար», Ա Պետ. Բ 5: Երբ չէնք մը շինուի, զայն շինողը կը նստի ու առաջ անոր ծախսը հաշիւ կ'ընէ. Ղուկ. ԺԴ 28: Քրիստոս ալ իրեն եկեղեցի մը շինուելու ծախսը հաշիւ ըրաւ, ու տեսնելով թէ անոր ծախսը Իր Աստուածային, պատուական սուրբ արիւնն է, յօժար եղաւ այս ծախսը վճարելու, և անով ծախսու առաւ զայն. Գործք. Ի 28: Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր համար. Եփ. Բ 25: «Յիսուսի նայինք, մեր հաւատքին առաջնորդին ու կատարողին, որ այն ուրախութեանը համար, որ իր առջեւ կեցած էր, խաչը յանձն առաւ, ամօթը արհամարհեց, ու Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ» Եբր. ԺԲ 2, Յիսուսի առջեւ կեցած ուրախութիւնը Իր եկեղեցին էր, Իր հարսն էր:

Ի՞նչ է Քրիստոսի եկեղեցիին դիրքը աշխարհի հանդէպ: Այս հարցումին պատասխանը որոշ կերպով զրուած է Աստուծոյ խօսքին մէջ, Հո. ԺԲ 2: «Մի կերպարանիք այս աշխարհին կերպարանքով»: Աշխարհին կերպարանքը սատանայական է, մարմնային է և դժոխային. աշխարհը կ'ըսէ, ուտենք ու խմենք, վասնզի վաղը պիտի մեռնինք: Աշխարհի ուտելը, խմելը, հագնելը, մէկ խօսքով բոլոր ապրելակերպը Աստուծմէ չէ, և ոչ ալ Անոր փառքին համար: «Անոնք չեն ուզեր զԱստուած իրենց գիտութեանը մէջ պահել» Հո. Ա 28: «Խաղաղութեան ճամբան չճանչցան, Աստուծոյ վախը չկայ անոնց աչքերուն առջեւ». Հո. Գ 17, 18: «Բոլոր աշխարհ չարին մէջ է», Ա Յով. Ե 19: Ամէն մէկ հաւատացեալ պէտք է զգուշութեամբ կարգայ հետեւեալ համարները և պահէ իր սրտին մէջ. «Մի սիրէք աշխարհը, ոչ ալ ինչ որ աշխարհի մէջ է: Եթէ մէկը աշխարհը կը սիրէ, անոր ներսիդին Հօրը սէրը չկայ: Քանզի ամէն բան որ աշխարհի մէջ է, մարմնի ցանկութիւնը ու աչքերու ցանկութիւնը և այս կեանքին ամբարտաւանութիւնը Հօրմէն չէ, հապա այս աշխարհէն է: Աշխարհս ալ կ'անցնի, անոր ցանկութիւնն ալ, բայց ան որ Աստու-

ծոյ կամքը կը կատարէ, յաւիտեան կը մնար», Ա Յով. Բ 15-17, Յակ. Դ 4:

Վերջին ատենուան մեծ վտանգներէն մին ալ Աստուծոյ զաւակներուն աշխարհի գարշահոտ բաներուն աչք տնկելն է: «Մի կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը»:

Ի՞նչ է աշխարհին դիրքը եկեղեցիին հանդէպ: Տեսանք թէ եկեղեցին ի՞նչ դիրք պէտք է բռնէ աշխարհի դէմ, պէտք է նաև անհրաժեշտ գիտնալ թէ աշխարհ մեզի դէմ ինչ դիրք կը բռնէ:

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ, «Եթէ աշխարհ ձեզ կ'ատէ, գիտցէք որ ձեզմէ առաջ զիս ատէ: Եթէ աշխարհէ եղած ըլլայիք, աշխարհ իրենները կը սիրէր, բայց որովհետեւ աշխարհէ չէք, հապա ես ձեզ աշխարհէ ընտրեցի, անոր համար աշխարհ ձեզ կ'ատէ: Միտքերնիդ բերէք այն խօսքը որ ձեզի ըսի թէ, ծառան իր Տէրոջ մէջ մեծ չէ, եթէ զիս հալածեցին, ձեզ ալ պիտի հալածեն»։ Յով. ԺԵ 18-20:

Մարդու անկումէն ի վեր որոշ կերպով տեսնուած է, որ ճշմարտութիւնը և ճշմարտութեան կողմը եղողները հալածուած են անոնցմէ՝ որ ճշմարտութենէ չեն եղած: Անոնք, «նախատինքներու ու բանտերու փորձը առին, քարկոծուեցան, սղոցուեցան, փորձանքի մէջ ինկան, սրով սպաննուելով մեռան, ոչխարի մորթերով ու այծի մորթերով պաղտեցան, կարօտութիւն քաշելով, նեղը իյնալով, չարչարուելով. որոնց արժանի չէր աշխարհ»։ Քրիստոսի աշակերտ ըլլալէն յետոյ աշխարհէն պատիւ փնտնել չը կրնար ըլլալ. յօժար պիտի ըլլաս որ մարդիկ քեզ խելրած, անմիտ, նեղմիտ և դիւահար կոչեն: Մեր Տէրը կ'ըսէ. «Եթէ տանտէրը Բէեղ-գեբուղ կոչեցին, որչափ աւելի անոր ընտանիքը». Մատթ. Ժ 23:

Բայց ի՞նչ պիտի ըլլայ եկեղեցիին պարտականութիւնը աշխարհի հանդէպ. — Լոյս ըլլալ. Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Դուք էք աշխարհի լոյսը»: Աստուծոյ խօսքին մեզի սորվեցուցած ճշմարտութիւնը այս էր, «այս աշխարհը խաւար է». Եփ. 2 12. և երբ մենք առանց Քրիստոսի էինք, խաւարի մէջ էինք. Եփ. Ե 8: Բայց երբ Քրիստոսը մեր Փրկիչը ըրինք, «եղանք լուսոյ որդիներ ու ցորեկուան որդիներ, զիշերուանը չենք, խաւարինը չենք». Ա. թեա. Ե 5: «Աստուած մեզ ազատեց խաւարին իշխանութենէն ու իր սիրելի Որդւոյն թագաւորութեանը փոխադրեց». Կող. Ա 13, Ա Պետ. Բ 9: Երանի թէ բոլոր Աստուծոյ զաւակները իրենց այս սուրբ

պարտականութիւնն ճանչնային իրապէս: Մենք շատ անգամ կը խօսինք աշխարհի համար, որ առանց Քրիստոսի դէպի կորուստ կ'երթան, շատ անգամ անոնց փրկութեան համար կ'աղօթենք, բայց գիտնալ պէտք ենք թէ ասոնք աւելի դիւրին բաներ են, որ մեղաւորներուն համար կ'ընենք, Աստուծոյ պահանջը այս է որ մենք անոնց առջեւ լոյս ըլլանք ու նաեւ ցոյց տանք սրբութիւն, խոնարհութիւն և Սուրբ Հոգիին զօրութիւնը մեր կեանքին մէջ:

Կ'ըսուի թէ, ազարակի մը մէջ տունին հայրը փափաք ունեցաւ իր զրասեղանին վրայ քարիւղի ճրագին տեղ ելեքտրական ճրագ մը ունենալ, ուստի դրանը զանգակին ելեքտրական թելերուն ծայրը ելեքտրական դամբար մը անցուց, բայց լոյս չեղաւ, ասոր վրայ երբ ելեքտրականութենէ հասկցող արհեստաւոր մը կանչեց և անյաջողութեան պատճառը հասկնալ ուզեց, մարդը ըսաւ, լոյս տալու համար պէտք եղած ելեքտրական զօրութիւնը ձայն տալու համար պահանջուած ելեքտրական զօրութենէն աւելի պէտք է ըլլայ: Շատ տեղեր, շատ հողերը ջանքեր, շատ քարոզներ և շատ հողերը գործունէութիւններ անպտուղ կը մնան, անոր համար որ մտքի գիտութիւնով ու մարմինի զօրութիւնով եղած ջանքեր են: Տէրը մեզմէ իրաւունքով կը պահանջէ, որ մենք ամէն բանէ առաջ մեր անձնական տիպար և քրիստոնէական սուրբ կեանքով մարդոց առջեւ լոյս տանք: Երբ մենք մեր քրիստոնէայ անունով բարկացոտ մէկը կ'երեւինք, մեր լոյսը խաւարի կը դառնայ: Երբ քրիստոնէայ անունով միասին մեր կեանքին մէջ ազահութեան հոգին ցոյց կուտանք, թէ եկեղեցիին մէջ և թէ դուրսիներուն գայթակղութիւն կ'ըլլանք, երբ մեր առօրեայ առեւտրական կեանքին մէջ, Աստուծոյ և մարդոց առջեւ մաքուր խղճմանք պահելու ջանք չենք ունենար, մարդիկ մեր բերնով եղած վկայութիւններուն չեն հաւատար: Տէր Յիսուս կ'ըսէ, «Այնպէս թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը ու փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքն է». Մատթ. Ե 16: Դիտանք թէ «Մարդոց առջեւ» որոշ իմաստով մը ըսուած է, որովհետեւ մենք իբր քրիստոնէաներ, իբր Քրիստոսի անունը դաւանողներ, մարդոց առջեւ անցած, անոնց առջեւ կ'երթանք: Անոնք մեզ իրենց աչքերուն նշանակէտ առած են, տեսնելու թէ մեր կեանքը մեր բերնի վկայութիւններուն կը համաձայնի, կը համապատասխանէ. սիրելիներ, միտք առնենք սա խօսքերը, որ մեզի, հա-

ւատացեալներու համար գրուած են, «Որպէսզի ըլլանք անբիծ ու անարատ, Աստուծոյ որդիներ առանց մեղաւորանքի, կամակոր ու խոտորեալ ազգին մէջ, որոնց մէջ դուք լուսաւորներու պէս կը փայլիք աշխարհի մէջ»։ Փիլ. Բ 15: Փառք տուր Աստուծոյ որ Անոր ձրի շնորհքովը փրկուած և Անոր զաւակը եղած ես, նոյն ատեն ջանք ըրէ որ բարի գործերու նախանձաւոր ըլլաս։ Տիտ. Բ 14 և կարգա Եփ. Բ 10:

Աստուծոյ մեր վրայ գրուած ուրիշ պարտականութիւն մըն ալ կայ, որ է վկայել մեր բերնով, գործելով Աւետարանի դաշտին մէջ, այն շնորհքին չափովը, որ Տէրը մեզմէ ամէն մէկուն տուած է: Գէդէօնին յաղթութիւնը այս էր, որ «Ամէն մարդ բանակին բոլորտիքը իր տեղը կայնէր էր»։ Դատ. Է 21: Տէրը մեզի աւելի շնորհք և իմաստութիւն տալ, որ զիտնանք թէ շատ կարճ ժամանակ մը ունինք ծառայելու այս խեղճ և կորսուած աշխարհին: Ժամանակը ծախու առնենք, զայն Տէրոջը համար ծախսելով:

(Շար.)

Վեր. Պ. Ս. ԱԿԻԻԼԵԱՆ



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԵՅԹԸ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տնտեսութիւն մը՝ Ս. Գրքին մէջ՝ ժամանակաշրջան մըն է, որուն միջոցին Աստուծոյ կամքին մասնակի յայտնութեան մը հանգէպ մարդուն հնազանդութիւնը կը փորձուի: Այսպիսի եօթը տնտեսութիւններ կան Ս. Գրքին մէջ:

1. Անմեղութեան տնտեսութիւնը. — Ծննդ. Ա. 28. Մարդը ստեղծուեցաւ անմեղութեան մէջ, ամեն կատարելութիւններով շրջապատուած, բացարձակապէս պարզ փորձի մը ենթարկուած, և անհնազանդութեան հետեւանքին վրայ զգուշացուած: Կինը ինկաւ՝ հպարտութեան զոհ երթալով, իսկ մարդը ինկաւ հանդարտ գիտակցութեամբ: «Մարդը չխաբուեցաւ» Ա. Տիմ. Բ 14: Աստուած վերականգնեց իր մեղանշող արարածները՝ բայց անմեղութեան տնտեսութիւնը վերջ

գտաւ զրախտէն արտաքսումի վճիռով. Ծննդ. Գ 24:

2. Խղճի տնտեսութիւնը. — Ծննդ. Գ 23. Անհնազանդութեամբ՝ մարդը անհատական և փորձառական գիտակցութեան եկաւ բարիին և չարին. բարիին՝ իբր հնազանդութիւն, իսկ չարին՝ իբր անհնազանդութիւն Աստուծոյ յայտնուած կամքին հանգէպ: Այս գիտութիւնով խիղճը արթնցաւ: Դրախտէն վոնտուած և երկրորդ կամ Ազգամական ուխտին տակ գրուած՝ մարդը պատասխանատու էր ամեն գիտցուած բարին՝ կատարելու, ամեն գիտցուած չարէն ետ քաշուելու և Աստուծոյ մօտենալու զոհով: Մարդուն այս երկրորդ փորձուելուն հետեւանքը արձանագրուած է Ծննդ. 2 5ի մէջ և այս տնտեսութիւնը վերջացաւ ջրհեղեղի դատապարտութիւնով: Այնպէս կ'երեւի թէ «պարտեզին արեւելեան կողմը» Ծննդ. Գ 24. ուր կը գտնուէին քերովքէները և բոցեղէն Սուրը՝ երկրպագութեան վայրը մնաց այս երկրորդ տնտեսութեան միջոցին:

3. Մարդկային կառավարութեան տնտեսութիւնը. — Ծննդ. Ը 21. Խղճի տնտեսութեան մէջ ալ անմեղութեան տնտեսութեան եղածին պէս՝ մարդը բոլորովին ձախողեցաւ, և ջրհեղեղին դատապարտութիւնը երկրորդ տնտեսութեան վախճանը ու «երրորդին սկզբնաւորութիւնը կը նշանակէ: Նոյեան ուխտին յայտարարութիւնը՝ մարդկութիւնը նոր փորձի մը կ'ենթարկէ: Անոր յատկանշական հանգամանքն է՝ առաջին անգամը ըլլալով մարդկային կառավարութեան հաստատութիւնը — մարդուն կառավարուիլը մարդու ձեռքով: Մարդը Աստուծոյ հաշուոյն աշխարհը կառավարել կ'ստանձնէ: Այդ պատասխանատնութիւնը կը հանգչէր ամբողջ մարդկային սերունդին ուսին, հրեայ և հեթանոս, մինչեւ որ խոստացեալ երկրի ուխտի — Բ. Օր. ԻԸ—Լ. 1—10 — տակ Իսրայէլ ձախողեցաւ. իր վրայ բերաւ գերութեանց դատապարտութիւնը, «Ազգերու ժամանակները» սկսաւ — Դուկ. ԻԱ 24, Յայտն. Ժ2 14 — և աշխարհի կառավարութիւնը մի միայն և բոլորովին հեթանոսաց ձեռքը անցաւ, Դան. Բ 36—43, Դուկ. ԻԱ 24, Գ. Առաք. ԺԵ 14—17: Տիտուր եւ յայտնի իրողութիւն մըն է թէ ըլլայ Իսրայէլ, ըլլայ միւս ազգերը, ցարդ աշխարհը կառավարած են ոչ թէ Աստուծոյ համար՝ հապա իրենց անձին համար: Ցեղային փորձուիլը վերջացաւ լեզուներու խառնուելովը, հրեաներուն փորձուիլը վերջացաւ անոնց գերութիւններովը, մինչդեռ ազգերու փորձուիլը պիտի

վերջանայ «Արձան»ին փշրուելովը, Դան. Բ., և ազգերու դատաստանովը, Մատթ. ԻԵ 31—46:

4. Խոստումի տնտեսութիւնը.— Ծննդ. ԺԲ 1—Աբրահամի և իր մարմնաւոր ցեղին համար յայտնի է թէ Աբրահամեան ուխտը մեծ փոփոխութիւն երեւան բերաւ. Ծննդ. ԺԵ 18: Անոնք որոշապէս խոստմունքին ժառանգները դարձան: Այդ ուխտը բոլորովին շնորհքի և անպայման ուխտ մ'է: Աբրահամի յաջորդներուն կը բաւէր միայն բուն իրենց երկրին մէջ կենալ՝ որպէսզի ամեն օրհնութիւն ժառանգէին: Եզրիպտոսի մէջ թէեւ անոնք կորսնցուցին իրենց օրհնութիւնները՝ բայց ոչ իրենց ուխտը: Խոստումի տնտեսութիւնը վերջ գտաւ երբ Իսրայէլ յանդգնութեամբ օրէնքը ընդունեց: Ելից ԺԺ 8: Շնորհքը անոնց համար փրկիչ մը պատրաստած էր յանձին Մովսէսի, յանցաւորին համար զոհ մը հոգացած էր և Աստուածային զօրութեամբ զանոնք գերութենէ ազատած. Ելից ԺԺ 4. բայց Սինա լեռան առջեւ անոնք շնորհքը օրէնքի հետ փոխեցին: Խոստումի տնտեսութիւնը կ'երկարի Ծննդ. ԺԲ 1էն մինչեւ Ելից ԺԺ 8 և միայն Իսրայէլական էր: Պէտք է զանազանել տնտեսութիւնը ուխտէն: Առաջինը փորձի ենթարկելու կերպ մըն է, մինչդեռ ուխտը անպայման ըլլալով յաւիտենական է: Օրէնքը Աբրահամեան ուխտը չխափանեց. Գաղ. Գ 15—18. բայց միջանկեալ կրթական վերաբերում մըն էր «մինչեւ գայ այն սերունդը որու խոստացուեր էր». Գաղ. Գ 19—29, Դ 1—7:

5. Օրէնքի տնտեսութիւնը.— Ելից ԺԺ 8. Այս տնտեսութիւնը կ'երկարի Սինայէն մինչեւ Գողգոթա, Ելիցէն մինչեւ խաչը: Իսրայէլի պատմութիւնը, ըլլայ անապատին մէջ՝ ըլլայ Քանանու երկրին մէջ, երկար արձանագրութիւն մըն է օրինազանցութեան: Թէեւ անոնց ազգովին օրէնքով փորձի ենթարկուիլը վերջ գտաւ գերութեան պատիժովը՝ բայց տնտեսութիւնը ինքնին վերջ գտաւ խաչին վրայ: Օրէնքի տնտեսութեան մէջ հետեւեալ չորս կէտերը նկատելի են:

ա. Նախապէս մարդուն վիճակը. Ելից ԺԺ 1-4:

բ. Անոր պատասխանատուութիւնը. Ելից ԺԺ 5, 6, Հոով. Ժ 5:

գ. Անոր ձախողումը. Դ. Թագ. ԺԷ 7—17, 19. Դ. Առաք. Բ 22, 23:

դ. Դատաստանը. Դ. Թագ. ԺԷ 1—6, 20, ԻԵ 1—11. Ղուկ. ԻԱ 20—24:

6. Շնորհքի տնտեսութիւնը.— Յովհ. Ա 17. — Շնորհքը «մեր Փրկիչ Աստուծոյն քաղցրութիւնն ու մարդասիրութիւնն է ... ոչ թէ արգարութեան գործերէն զորոնք մենք ըրինք». Տիմոս Գ 4, 5: Այս պատճառաւ շնորհքը միշտ օրէնքին իբր հակապատկեր կը ներկայացուի: Օրէնքին տակ՝ Աստուած մարդէն արգարութիւն կը պահանջէ, իսկ շնորհքին տակ՝ Աստուած մարդուն արգարութիւն կուտայ: Հոով. Գ 21, 22. Ը 4. Փիլ. Գ 9: Օրէնքը կապուած է Մովսէսի և գործերու հետ, շնորհքը Քրիստոսի և հաւատքի հետ. Յովհ. Ա 17. Հոով. Ժ 4—10: Օրէնքը կ'օրհնէ բարիները, շնորհքը կը փրկէ չարերը. Ելից ԺԺ 5. Եփես. Բ 1—9: Օրէնքը պայման դրած է թէ օրհնութիւնները իբր վարձք շահուելու են. շնորհքը ձրի պարգեւ մըն է: Թ. Օր. ԻԸ 1—6, Եփես. Բ 8, Հռ. Դ 4, 5:

Իբր տնտեսութիւն՝ շնորհքը կ'սկսի Քրիստոսի մահով և յարութեամբ. Հոով. Գ 24—26, Դ. 24, 25: Փորձի ենթարկման կէտը այլեւս փրկուելու համար օրէնքի հնազանդիլ չէ՝ հապա Քրիստոսը ընդունիլ կամ մերժել և բարի գործեր ունենալ իբր փրկութեան պտուղ: Յովհ. Ա 12, 13, Գ 36, Մատթ. ԻԱ 37, ԻԲ 42, Յովհ. ԺԵ 22, 25, Եբր. Ա 2, Ա. Յովհ. Ե 10—12: Շնորհքի տնտեսութեան փորձին անմիջական արդիւնքը եղաւ հրեաներուն կողմէ Քրիստոսի մերժուիլը և Անոր խաչուիլը հրէից և հեթանոսաց ձեռքով. Գ. Առաք. Դ 27: Շնորհքի տակ՝ մարդուն փորձին համար մարդարէացուած վախճանն է դաւանական եկեղեցիին հաւատութեան շնորհքը և ասոր հետեւանք՝ Յայտնութեան Գրքի դատաստանները:

Շնորհքը կրկնակի յայտնութիւն ունի, ա. փրկութեան մէջ. Հոով. Գ 24 եւայլն: Բ. և փրկուածին «քալել»ուն և ծառայութեան մէջ. Հոով. Զ 15 եւայլն:

7. Ժամանակներու լրանալուն տնտեսութիւնը.— Ասիկա երկրի վրայ մարդկային կեանքը պայմանաւորող ժամանակաշրջաններու վերջինն է և Դաւիթի ուխտով խոստացուած թագաւորութեան շրջանը: Բ. Թագ. Է 8—17, Զաք. ԺԲ 8. Ղուկ. Ա 31—33. Ա. Կոր. ԺԵ 24: Այս տնտեսութեամբ Քրիստոսի թագաւորութեան ներքեւ կը հաւաքուին բոլոր անցեալ ժամանակները:

ա. Ճնշումի և յոռի վարչութեան ժամանակը կը վերջանայ Քրիստոսի թագաւորութիւն առնելովը. Եսայ. ԺԱ 3, 4:

բ. Վկայութեան և Աստուածային երկայնմտութեան ժամանակը կը վերջանայ դատաստանի:

մէջ. Մատթ. Ի 31—46, Գ. Առաք. Ժէ 30, 31, Յայտն. Ի 7—13:

գ. Նեղութեան ժամանակը կը վերջանայ հանգիստով և վարձատրութեամբ. Բ. Թեո. Ա 6-7:

դ. Չարչարանքի ժամանակը կը վերջանայ փառքի մէջ. Հոով. Ը 17, 18:

ե. Իսրայէլի կուրութեան և պատիժի ժամանակը կը վերջանայ վերահաստատմամբ եւ ապաշխարութեամբ. Հոով. ԺԱ 25—27, Եղեկ. Լթ 25—29:

զ. Ազգերու ժամանակները կը վերջանան «արձան»ին փշրուելով եւ երկինքի թագաւորութեան հաստատուելովը. Դան. Բ. 34, 35, Յայտն. Ժթ 15—22:

է. Ստեղծուածներուն գերութեան ժամանակը կը վերջանայ ազատութիւնով՝ Աստուծոյ որդիներուն յայտնուելովը. Ծննդ. Գ 17, Եսայ. ԺԱ 6—8, Հոով. Ը 19—21:

«ՈՐՊԷՍ ԶԻ ԱՍՏՈՒԱԾ ԸԼԼԱՅ ԱՄԵՆԸ ԱՄԵՆ ԲԱՆԻ ՄԷՋ»: Ա. Կոր. ԺԵ 28:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՅ ՀԱՒԱՏՈՅ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ (353-373)

ՎԱՆՔԵՐ ԵՒ ԴՊՐՈՅՆԵՐ. — Պետականացուածէն յետոյ եկեղեցին, — թէ՛ հոովմէական աշխարհի և թէ՛ Հայաստանի մէջ — սկսաւ կորսնցնել իր մարտիրոսական շրջանի աւիւնն ու զոհողութեան ոգին եւ ծանծաղնալ ու աշխարհայնալ: Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ, «Սաղաղութեան վայելքին մէջ ցածցանք և եկեղեցին անթիւ Հարիքներով լեցուցինք: Երբ կը հալածուէինք, աւելի իմաստուն, աւելի եռանդուն էինք: Ինչ որ է կրակը ոսկին՝ նոյնն է փորձութիւնը հոգիին համար»:

Սորունկ հաւատացեալներէն շատեր դժգոհ այդ վիճակէն՝ կը քաշուէին քաղաքներէն դէպի առանձնութիւն և ճգնողական կեանք կը վարէին: Կը հրաժարէին ամուսնութենէ ու ընտանեկան վայելքներէ և ինքզինքնին կ'ենթարկէին խիստ զրկանքներու: Սակաւակեաց էին, առհասարակ բանջարեղէններով ու պտուղներով կ'ապրէին:

Անոնցմէ շատեր ճշմարտապէս ազատած ապականեալ քաղաքակրթութեան ու ընկերութեան հաճոյամոլութենէն ու անբնականութենէն՝ սըրտագին հաղորդակցութիւն կ'ունենային Աստուծոյ հետ: Անոնցմէ մին, Ս. Բարսեղ, այսպէս կը բացատրանայ. «Ո՞վ կը վերադարձնէ ինծի այն գիշերային հսկումներն ու գովաբանական երգերը, այն վերացումները առ Աստուած, եղբայրական այն հաղորդակցութիւնը և սրտի այն խաղաղութիւնը»:

Բայց շուտով երեւան եկաւ որ մեղքը իրենց հետեւած է նաեւ առանձնութեան մէջ, մենութեան գովքը հիւսող Ս. Բարսեղը, չէ ծածկած նաեւ անոր վտանգները: «Թէեւ ես քաղաքի կեանքը ձգեցի իբր աղբիւր հաղարաւոր Հարիքներու, բայց չկրցի ձգել նաեւ իմ եսս: Ընդհանուր առմամբ առանձնութեան մէջ ես շատ չյառաջդիմեցի: Ճգնաւորին էութիւնը կը հակասէ սիրոյ էութեան, քանզի հոն ամեն մէկը կը հոգայ այն բաներուն վրայ, որոնք իրեն անհրաժեշտ են»: Այո՛, շատեր ինկան նոյնիսկ կոշտ մեղքերու և ոմանք ալ տեսակ մը հոգեկան հիւանդութեան մէջ, որուն ենթական ինքզինք կը զգայ Աստուծմէ լքուած ու անապատային վիճակի մը մէջ:

Ահա այս Հարիքներուն առջեւն առնելու համար՝ հաստատուեցան վանքերը: Ի միջոց այլոց և մասնաւորաբար Սուրբ Բարսեղ, — որ ատեն մը մենակեաց ըլլալէ յետոյ քաղաք վերադարձած էր եւ վերջապէս Կեսարիոյ արքեպիսկոպոսն եղած, և որ իր անձին մէջ կը միացնէր ճգնաւորի հոգեւոր խորութիւնն ու գործնական քրիստոնէի անձնազոհ կենցաղավարութիւնը, — «Չանաց վանականները քաղաքացիական գործոն կեանքին ու եկեղեցական կարգադրութիւններուն մօտ բերել» և անոնց խորունկ հոգեւորութիւնը պտղաբեր ընել Աստուծոյ թագաւորութեան գործին համար: Հրատարակեց մասնաւոր վանական կանոններ, որոնք մանաւանդ Բիւզանդական կայսրութեան մէջ որդեգրուեցան ու գործադրուեցան:

Արդ՝ Ներսէս հաւանաբար Բարսեղին դպրոցական ընկերն եղած էր Կեսարիոյ մէջ և անկէ ետքն ալ մտերիմ յարաբերութիւն կը մշակէր անոր հետ: Ուստի օգտուեցան անոր կանոններէն եւ իր մասնաւոր ուղադրութեան առարկան ըրաւ մենակեացներն ու վանականները եւ կանոնաւորեց անոնց կեանքը: Առաջիններուն համար հաստատեց հիւղերու խումբեր, իսկ վերջիններուն համար վանքեր: Իր թելադրու-

Թեամբ իշխաններն ու նախարարները վանքերուն յատկացուցին մասնաւոր գիւղեր ու ագարակներ և ատոր փոխարէն իրաւունք ստացան իրենց մեռելները թաղել վանքերու մէջ:

Վանականներու կեանքը կանոնաւորուած էր բծախնդիր ճշգրտութեամբ մը եւ անոնց աշխատանքը բաժնուած իւրաքանչիւրին կարողութեան համաձայն: Իրենց ժամանակին մէկ մասը կը գործածէին՝ կատարելով իրենց առտնին գործերը եւ մշակելով վանքին պարտէզները, այգիները եւ դաշտերը: Իսկ միւս մասը կ'անցընէին առանձնական ու միաբանական աղօթքով, սաղմոսերգութեամբ, խոկումով ու հսկումով: Այս սուրբ զբաղումներու ատեն անոնցմէ ոմանք յաճախ այնքան կենդանի կերպով կը վայելէին Աստուծոյ ներկայութիւնը, որ սիրայօժար կը հրաժարէին աշխարհի հրապոյրներէն, նոյնիսկ ընտանեկան բնական վայելքներէն և ուրախութեամբ կը տոկային զրկալից, խստամբեր ու փշալից կեանքին: Ընդունակ վանականները կը քարոզէին ու կ'աւետարանէին մօտակայ գիւղերուն ու քաղաքներուն մէջ. այո՛, ոմանք կը գործէին նաեւ իբր միսիոնար հեթանոսներու մէջ, քանի որ Հայաստանի շատ վայրերուն մէջ ան դեռ գոյութիւն ունէր:

Ժամանակի ընթացքին աւելի ընդարձակեցաւ վանականներու գործը: Քանի որ դեռ տպագրութիւն գոյութիւն չուներ, անոնք կ'ընդօրինակէին Աստուածաշունչը և կը գեղազարդէին զայն սքանչելի մանրանկարներով: Շատեր կ'ընդօրինակէին նաեւ հոգեւոր, պատմական ու իմաստասիրական գրքեր: Այո՛, ոմանք անձամբ կը հեղինակէին այդ կարգի գրքեր: Մեծ մասամբ վանականներու կը պարտինք մենք մեր զմայլելի մանրանկարներով զարդարուն ձեռագիրները և մեր ոսկեղարու և միջնադարեան գրականութիւնը:

Թէեւ վանականներ ունեցած են նաեւ իրենց ծայրայեղութիւնները, խստութիւններն ու մոլեռանդութիւնները, ոմանք նոյնիսկ գայթակղեցուցիչ մեղքեր, բայց պէտք է ըսել թէ վանքեր կը լեցնէին այն դարերուն մէջ մեծ բաց մը: Մեծ եղած է անոնց մատուցած ծառայութիւնը հայ եկեղեցւոյն և քաղաքակրթութեան համար: Եւ մենք սրտազինու երախտագէտ ըլլալու ենք Ներսէս Պարթեւի, որ զանոնք բարեկարգեց ու բազմացուց և անոնց գոյութիւնը դրաւ հաստատուն հիմքերու վրայ:

Վանքերէն շատեր գործածուեցան նաեւ իբր կեդրոններ կրթութեան, որուն տարածման մաս-

նաւոր նախանձախնդրութիւն ունէր Ներսէս: Ուստի նա չգոհացաւ՝ միայն վանքերէն ոմանք իբր զպրոց գործածելով, հապա նաեւ բարեկարգեց Լուսաւորչի հաստատածները և անոնց վրայ աւելցուց նորեր, — ըստ Բիւզանդ Փաւստոսի «Հայաստանի բոլոր գաւառներուն մէջ ալ»: Իբր ուսուցիչ կարգեց Ներսէս ընդհանրապէս այն ուշիմ և կորովի հայ երիտասարդները, որոնք իրենց ուսումը ստացած էին օտար կրթական կեդրոններու մէջ, — Եդեսիա, Կեսարիա և մանաւանդ Աթէնք: Հոս դեռ իբր ուսուցչապետ կը պաշտօնավարէր հայ ազգի Պրոյերեսիոս կամ Պարոյր և հայ երիտասարդները կը հրապուրէր զէպի հոն:

Քանի որ մենք դեռ գիր և գրականութիւն չունէինք, հայ աշակերտները Ներսէսի հաստատած հայ դպրոցներուն մէջն իսկ իրենց ուսումը կ'առնէին օտար լեզուով: Հարաւային նահանգներու մէջ կ'ուսանէին ասորական գիրը, լեզուն ու գրականութիւնը, իսկ հիւսիսայիններուն մէջ յունականը: Բայց միեւնոյն ատեն անոնք կը վարժուէին՝ Ս. Գրոց հատուածները յունարէնէ կամ ասորերէնէն բերանացի թարգմանել հայերէնի, և հայերէն լեզուով աղօթել ու քարոզել: Ասով անոնք մեր լեզուն կը մշակէին, զայն կը ճոխացնէին ընտիր բառամթերքով և նուրբ ոճով: Ետքը այս աշակերտները «եղան վերածնող ու թարգմանիչ պաշտօնեաներու զարգացման ռահվիրաները, որոնք ճամբայ բացին հայերէն դպրութեանց սկզբնաւորութեան: Այս խումբէն եղան նոյնինքն Ներսէսի զաւակը Սահակ և ձեռնասունը Մեսրոպ հայ գրիչ գտիչները և հայ դպրութեան նախահայրերը» (Օրմանեան):

Ուրեմն Ներսէս Պարթեւ ասով ալ մեծ դեր մը կատարած է. իրենները բերանացի թարգմանութեան վարժեցնելով՝ զարգացուցած է անոնց հայերէն լեզուն և զանոնք նախապատրաստած գրաւոր թարգմանութեան մեծ գործին:

Բայց Ներսէսի դերը աւելի մեծ եղած է հայ եկեղեցական կեանքին մէջ՝ իր հիմնած բարեգործական հաստատութիւններով: Սակայն այդ մասին յաջորդիւ:

ԲՐՈՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Աստուծոյ զաւակին պարտականութիւններէն մին է փափկանկատութիւնով վարուիլ ամեն մարդու հետ, եւ ուրիշները պատուական սեպիլ, յարգելով զանոնք:

ՄԻ ՎԱԽՆԱՐ ՄԻԱՅՆ ԹԷ ՀԱԻԱՏԱ

Մարկոս 5 : 36



Կափառնայումի մէջ կ'ապրէր Յայրոս անու-
նով մէկ մը: Հօր և մօր երջանկութեան պատ-
ճառը 12 տարեկան աղջնակ մըն էր: Օր մը
տրտմութիւնը իրենց յարկէն ներս մտաւ, սրտա-
հատորը հիւանդ էր. չենք գիտեր թէ հիւանդու-
թեան սկզբնական օրերուն ինչ միջոցներու դի-
մեց հայրը, միայն սա չափը գիտենք թէ երբ
աղջիկը մահամեծ էր, ճամբայ ելաւ բժշկներու
Բժիշկը — Յիսուսը փնտռելու: Այս է ընդհան-
րապէս մարդկային կերպը. երբ հիւանդութիւնը
կը յառաջանայ հսկայաքայլ, այն ատեն կը ձեռ-
նարկեն Աստուածային դարմանի վրայ մտածելու:
Երբ Յիսուս ոտքերը ցամաք դրաւ, հարիւրա-
պետը յուզուած երեւոյթով մօտեցաւ իրեն, կ'ա-
ղաչէր ու կ'ըսէր, աղջիկս մեռնելու մօտ է, եկուր
ձեռքդ վրան դիր ու պիտի ապրի: Յիսուս ան-
միջապէս թափանցեց հօր մը սրտի ներքին ծալ-
քերուն, զգաց անոր կակիծին ծանրութիւնը,
սիրով հետեւեցաւ իրեն, պահ մը խեղճ հօրը
սրտին մէջ յոյսը ծագեցաւ, տրտմութիւնը կար-
ծես ժպիտի փոխուած, մահուան մղձաւանջը քիչ
մը հեռաձած՝ միասին կ'երթային: Բաւական
յառաջացած էին երբ յանկարծ գուժկաններ
եկան՝ մահուան բօթը հաղորդելու. «Աղջիկդ
մեռաւ, ինչո՞ւ վարդապետը կը յոգնեցնես», շատ
ուշ մնացիր: Այլ կրնաք երեւակայել հօր մը
վիճակը: Արցունքի կայլակներ այտերն ի վար
կը հոսէին, աչքերը մթազնած, գլուխը վար
ծռած կարծես չէր կրնար յառաջանալ: Սակայն
լսեց որ սփոփարար և սրտապնդիչ քաղցր ձայն
մը կը հնչէր իր աղանջին մի վախնար, միայն
հաւատաւ. Յիսուս զինքը կը քաջալերէր, օգնողը
իրեն մօտն էր: Ուրեմն մխիթարուած ներքնա-
պէս, բնական քայլերով կը յառաջանար, ինչո՞ւ
վախնամ, երբ «մի վախնար»ը Յիսուսի բերնէն
կ'ելլէ, ինչո՞ւ թերահաւատիմ երբ կ'ըսէ. «միայն
հաւատաւ»: Հաւատքով զօրացած երբ տուն հասաւ,
հրաշքը տեղի ունեցաւ:

Երբ կեանքի ամենի ալիքներ զքեզ շրջա-
պատեն մը յուսահատիւր կայ մէկ մը հոգիներ
սիրող որ կ'ըսէ, մի վախնար, միայն հաւատաւ:

Շատ բնական է որ երբ մարդս Աստուծոյ
հետ է, կը վախնայ: Կը վախնամ ըսաւ առաջին
մարդը ի պատասխան Աստուծոյ հարցման թէ
ո՞ր ես, Ծննդ. 3. 18: Մարդ վախով կը լեցուի

երբոր հետո կ'ապրի իր Ստեղծիչէն: Մարդիկ
պիտի վախնան գալիք բաներու համար. Ղուկ.
21, 26: Հաւատքի մարդիկ կանչուած են ոչ թէ
վախնալու այլ հաւատալու արտաքին երեւոյթ-
ներէն, տնտեսական տագնապներէն, անգործու-
թենէն, թէև ներքին տագնապի կը մատնուին,
տրտմութեանց և նեղութեանց բռնան տակ կը
կքին: Այսպիսիներ թող մտիկ ընեն Աստուծային
ձայնը, որ կը հնչէ իրենց աղանջներուն. «Մի
վախնար, Անիկա եկաւ մարդկութեան համար.
«Քաջասիրտ եղէք ես աշխարհի յաղթեցի»: Յով-
հաննէս առաքեալ իր աքսորանքի դժնէ օրերուն
լսեց Անոր ձայնը. Մի վախնար, ես Առաջինն և
վերջինն եմ, մեռայ բայց կենդանի եմ յաւիտ-
եանս յաւիտենից. Յայտ. Ա. 17:


Թերեւս մէկը հարցնէ ի՞նչ ընեմ որ չվախ-
նամ, դարձեալ այդ սիրուն ձայնն մեզի խոովեալ
հոգիներուն կը ցուցնէ ճշմարիտ ճամբան, միայն
հաւատաւ: Ոչ մի հաւատք կրնայ վախը մէկդի
վանել, բաց ի այն հաւատքէն որ աշխարհին
յաղթեց: Ո՞վ է որ աշխարհին կը յաղթէ, եթէ
ոչ անիկա որ կը հաւատայ թէ Յիսուս Որդի
Աստուծոյ է. Ա. Յովհ. Ե 5:

Ոչ մի խնդիր, ոչ մի բան կը լուծուի հոգե-
կան աշխարհին մէջ, առանց Անոր աջակցու-
թեան:

Կեանքի դառնութիւնը կը քաղցրանայ, ամէն
անորոշութիւն կը ցնդի, նեղութիւններ կը պակ-
սին, երբոր Սուրբ Հոգին կ'սկսի գործել մեր
առօրեայ կեանքի վրայ: Ան որ կը հաւատայ,
կեանք ունի, իսկ ան որ չհաւատար կեանք
չունի:

Գալալա

Վեր. Յ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ



ՇՈՒԿԱՌՔԻ ԻՆՉՈՒԻ ԿԵՑԱԻ

1883 Յունուար Յին էր, կը գրէ գերմանացի
ուսուցիչ մը, սիրելի կինս մահամեծ հիւանդ
էր, և ամէն կարգի նեղութիւններ զիս կը պա-
շարէին: Բայց եւ այնպէս, ընկերութեան մը վա-
րիչ-անդամը ըլլալով, շատ ստիպողական գործով

մը Բ... քաղաքը մեկնելու պարտաւոր էի: Արդ, մէկ կողմէն պարտականութեան գիտակցութիւնը և միւս կողմէն՝ իր քով մնալու համար սիրելի հիւանդին թախանձանքները զիստեղծին անզուրկ պայքարի մը մէջ ձգեցին: Վերջապէս կիսա ըսաւ.

— «Գնա՛, բայց Աստուծոյ սիրոյն ինծի խոստացիր ժամը 5ին մեկնող շոգեկառքով վերադառնալ»: Յանձն առի ու մեկնեցայ սիրտս սեղմուած:

Մեր հաւաքոյթը տեղի ունեցաւ պաշտօնակիցներէս մէկուն տունը, Բ... քաղաքին մօտ: Մասնաւորապէս խնդրած էի որ մեր խորհրդակցութիւնը կարելի եղածին չափ շուտով վերջանայ, սակայն գործը ուշացաւ և ժամը հինգին քառորդ մնացած էր միայն երբ ես ճամբայ ելայ դէպի Բ... քաղաքին կայարանը: Երբ քաղաքին հրապարակը հասայ, ժամը հինգը կը զարնէր: Այդ վայրկեանին զգացի որ եռացած ջուրի ալիք մը սիրտս ողողեց կարծես: «Ճիշդ հիմա է որ շոգեկառքը ճամբայ կ'ելլէ», ըսի ինքնիրենս: Արդ, իմ գտնուածս տեղէն մինչեւ կայարան քառորդ ժամէն հազիւ կրնար հասնիլ իր բոլոր ուժովը վազող մարդ մը:

Ու սկսայ վազել որսորդէն հալածուած եղնիկի մը նման, անդադար հարցնելով իւրովի. «Ի՞նչ պիտի ըսէ խեղճ, հիւանդ կինդ եթէ խոստացուած ժամուն չհասնիս. վազէ՛, վազէ՛, թերեւս գնացքը ուշ կը մեկնի»: Երբ կամուրջին տակ հասայ, տեսայ շոգեկառքը որ... կը մեկնէր: Անձկութեան աղաղակ մը սրտէս դէպի երկինք բարձրացաւ: Կեցայ ու սկսայ ճակատս ծածկող քրտինքը սրբել: Բայց ահա ձայն մը որոշապէս հրամայեց ինծի: «Շարունակէ՛ վազելը»: Ուստի վերսկսայ վազել և երբ կայարան հասայ տեսայ որ երկար կառաչարին վերջին վակոնները մեծ արագութեամբ սուրացին ու անհետացան:

Անկարելի է ըսել թէ այն ատեն ի՞նչ զգացի ես... Շրթներս փակ մնացին, բայց սիրտս աղաղակեց Աստուծոյ. «Ամենակարող Տէ՛ր, պէտք է որ ես տուն երթամ, եթէ զուն ալ այսպէս կը կամիս, շոգեկառքը կեցնելու ես»:

Ի՞նչ պատահեցաւ: Քանի մը երկվայրկեան ալ, և ահա շոգեկառքը յանկարծ կեցաւ: Ես հասայ վերջին վակոնին մօտ: Քննիչը աճապարանքով իջաւ վար ու պոռաց. «Կ'ուզէ՞ք մեկնի՞լ... տոմսակ ունի՞ք... Շուտ, շուտ ուրեմն»: Այո՛, աղաղակեցին սիրտս ու բերանս երջանկութեամբ

և ակնթարթի մը մէջ շոգեկառքին մէջ նստած էի արդէն: Երազ մը ըլլալ կը թուէր ինծի:

Քննիչը արագ ակնարկ մը նետեց տոմսակի վրայ. «Լաւ է», ըսաւ ժպտելով ու հետաքրքրութեամբ ինծի նայելով, մինչ ես քրտինքի մէջ թաղուած՝ կը ջանայի շունչ առնել:

— Շոգեկառքը ինչո՞ւ կեցաւ, հարցուցի:

— Ձեմ գիտեր, պատասխանեց, երթամ հասկնամ:

Քիչ վերջ վերադարձաւ ու ըսաւ. «Անոնք ալ չեն գիտեր»: Յետոյ գնաց իր տեղը, իսկ շոգեկառքը սկսաւ բոլոր արագութեամբ սուրալ: Գալով ինծի, իմ յարկաբաժինիս մէջ միս մինակ, ծունկի նետուեցայ: Ես գիտէի թէ ինչո՞ւ կեցած էր շոգեկառքը:


Մեծ բան մը չկրցայ ըսել Փրկչիս, սակայն իմ սիրտս ուրախութեամբ կը սարսուար, երկնային ուրախութեամբ մը, որ զայն դէպի երկինք կը վերացնէր:

Յետոյ սա խօսքերը հնչեցին ներսիդիս, որպէս ուրիշ աշխարհէ մը եկած մի պատգամ:

«Տէրը մօտ է բոլոր անոնց, որ անկեղծութեամբ Իրեն կը կանչեն: Ան կը կատարէ արդարներուն խնդրանքը, Ան կը պատասխանէ անոնց աղաղակին ու զանոնք կ'ազատէ»:

Տէրը մով եղբայրներ ու քուրեր, ես այս փորձառութիւնը պիտի չմոռնամ, իմ Աստուծոյ փառքին համար. ես զայն պատմեցի ճիշդ ինչպէս որ զայն ունեցայ...:

Թարգմ. Ֆրանս. Յ. Ք.



ՎԱԳԱՆՁԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Յով. Ա. 11-12)

Մէն-Լուի, 12 Յուլիս 1938

Սիրելի Հարաճճի Ս.

Միտքս դրած էի քեզի գրել: Ինքնիրենս կ'ըսէի, թէ և ալ չարը զիս ատէ ալ, ես զայն շատ պիտի սիրեմ: Կ'ուզեմ կարգալ Բ կոր. ԺԲ 15ը:


Գրեւու որոշումի մէջ էի երբ նամակդ ինծի յանձնուեցաւ: Ո՛հ, որքան տրտմեցայ վրադ սխալ գաղափար կազմած ըլլալուն համար: Ներէ ինծի սիրելի Սրբուկ, վասնզի թէն դուն չարածճի աշակերտ մըն էիր, բայց կը տեսնեմ որ շատ զգայնիկ և սիրազեղ սիրտ մը ունիս: Տէրը քեզ շատ: օրհնէ Ովսաննան շատ կը տրտմի որ ձեզի հետ չէ: Իսկ դուն երջանիկ ես Ս.ին և քրոջդ Մ.ին պէս հաճելի ընկերներու հետ: Ես ալ կ'ուզեմ որ միշտ երջանիկ ըլլաս: Դժբախտաբար՝ արձակուրդի բոլոր ուրախութիւնները, ամառուան ծաղիկներուն և գունազեղ թիթեռներուն պէս խափուսիկ են ու վաղանցուկ: Անոնց պէս անարժէք և շուտանցուկ են նաև աշխարհիս բոլոր ուրախութիւնները, Ա. Յով. Բ. 17: Բայց այն ուրախութիւնը զոր Յիսուս կուտայ, մնայուն և յաւիտենական է ինչպէս Յիսուս ինք: (Տես երբ. ԺԳ 8, Յով. ԺԵ 41, Յով. Դ 15):

Գիտե՞ս որքան յուզուեցայ սա տողերէդ.— «Ներէ ինծի սիրելի ուսուցիչս, որովհետեւ ես շատ չար էի, ես քեզ շատ տրտմեցուցի»: Անշուշտ կը ներեմ քեզի, սիրելի չարս: Թէն անառակութիւններուդ համար երբեմն պատժեցի քեզ և յաճախ ալ խստօրէն կը չախէի, բայց դուն գիտես թէ քեզ շատ սիրելուն համար էր որ այդ բոլորը ըրի, որպէսզի դուն կրթուիս և ազնուանաս: Սակայն հիմա համոզուած եմ թէ փայտէն ու բարկութենէն աւելի վստահելի ու հաճելի միջոց մը կայ կրթութեւ, ազնուանալու, Աստուծոյ և մարդոց սիրելի դառնալու, այն ալ Տէր Յիսուսի յանձնուելն է: Վասնզի միայն Յիսուս կրնայ մեզ ազատել սատանայի իշխանութենէն, մեղքի շղթաներէն, մեր յոռի ունակութիւններէն և գէշ ընկերներու ազդեցութենէն, համաձայն Յով. Ը. 36ի:

Իմ ձէգիրէ մեկնիլս լսելուդ համար շատ լացած ես եղեր: Ասկէ վերջ ալ մի լար, հապա սիրտդ Տէր Յիսուսի տուր և ինծի համար շարունակ աղօթէ: Եթէ այսպէս ընես, Տէր Յիսուսի հետ ես ալ մեծ մխիթարութիւնով պիտի ուրախանամ, որ փրկութեանդ համար թափուած Փրկչին արիւնը և իմ աշխատանքս ու աղօթքներս անպտուղ եղած չեն: Տէրը քեզի հետ ըլլայ Սրբուկ, Տէրը քեզ օրհնէ:

Քեզ շատ սիրող ուսուցիչդ

Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ



ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆԻ
ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1938ի մեր Միութեան ժողովի ընթացքին, աննախընթաց երեկոյ մ'էր որ ունեցանք Օգոստոս 31ի Զորեքշաբթի գիշերը: Պատուելի Սամուէլ Պազգալեանի ողջերթի հանդէսն էր որ կատարուեցաւ, որուն ընթացքին Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիին Միութեան ժողովը հանդիսաւոր կերպով մը զայն «ղրկեց» ձէգիրէ (Միջագետք), իբր Միսիոնար քրդախօս հայերուն եւ մահմետական քրդաց:

Լիոնի Հայ Աւետ. եկեղեցւոյ սրահը կանուխէն լեցուած էր խուռն բազմութեամբ մը: Ծաղիկներով և կանանչներով զարդարուած բեմն ու սրահին ճակատը կախուած համարը «Գացէք բոլոր աշխարհ և Աւետարանը քարոզեցէք» կը շեշտէին օրուան կարեւորութիւնը:

Ժողովին կը նախագահէր Վեր. Յ. Ն. Ղազարոսեան: Նախ խօսք տրուեցաւ Պատ. Վ. Սահակեանի, որ տպաւորիչ կտոր մը կարդաց «Տէրոջը ծառային» մասին: Ծառը ճշգրիտ և Սուրբ Գրական նկարագրական մ'էր, Տէրոջը հարազատ ծառային, Անոր կոչմանը, նկարագրին և զործունէութեան ու նուիրման նկատմամբ:

Ապա Բրոֆ. Գ. Խայիկեան խօսք առաւ յանուն Միութեան ժողովին և ազդու շեշտերով պարզեց Ֆրանսահայ եկեղեցիներու տեսակէտն մահմետական աշխարհի միսիոնարութեան հարցին նկատմամբ: Նա ցոյց տուաւ որ Միսիոնարութեան վարժուած մեր նախնեաց հայ եկեղեցիին յաջորդներուն համար քնական հոգեւոր պարտականութիւն մ'էր ստանձնել հայ ազգը շրջապատող ո՛չ քրիստոնեայ տարրերուն Աւետարանչութիւնը, որք դարերէ ի վեր սուտ մարգարէին կը հետեւին:

Նկատել տուաւ որ Ոսկեդարէն յետոյ եկող պատմութեան ընթացքին հայ եկեղեցին մոռցած, աւելի եւս ձգած է իր այս կոչումը: Ապա յենելով Տէրունական սկզբունքներու «Ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զանիկա, և ով որ ինծի ու Աւետարանին համար իր անձը կը կորսնցնէ, պիտի ապրեցնէ զանիկա», Բրոֆ. ը ազատօրէն ներկայացուց իր զաղափարը, ընդգծելով որ եթէ դարերու ընթացքին տասը հազարեակ մը միսիոնար մարտիրոսներ տուած

ըլլայինք ի սէր Աւետարանին, վստահաբար մեր վերջին միջոցին մը զոհերը պիտի խնայուէին մեզի:

Շեշտեց առ այս խարբերդի հայ Աւետարանական եկեղեցիներու միսիոնարական փորձերը, որոնք սակայն խեղդուած էին մեծ աղէտին թոհ ու փոհին մէջ: Վերջապէս անդրադարձաւ մեր եկեղեցիներու տեսիլքին այս խնդրոյն նկատմամբ և պատմեց թէ ինչպէս ֆրանսահայ եկեղեցին կը փափաքի ձեռնադրու ըլլալ մահմետականները Աւետարանելու մեծ գործին, ու այսօր կը զրկէ իր զաւակներէն մին, (որ երկրորդն էր եղբայր Ներսէս խաչատուրեանէ ետք), ստանձնելով նաև անոր ծախքին կարեւոր մէկ բաժինը:

Վեր. Dr. P. Berron իրեն յատուկ խորունկ և թափանցող խորհրդածութիւններով, ունկնդիրներուն ուշադրութիւնը կեդրոնացուց Տէր Յիսուսի և Անոր գործին վրայ:

«Մեր ուրախութիւնը այս գիշեր Տէր Յիսուս է ըսաւ, Գառն Աստուծոյ, որ զրկուեցաւ մեր, նաև մահմետական աշխարհին մեղաց համար»:

«Կ'ուրախանանք նաև անոր համար որ մեր եղբայրը Փրկչէն կանչուած և զրկուած է այդ սուրբ գործին և վերջապէս կ'ուրախանանք անոր համար որ Ֆրանսահայ Աւետ. եկեղեցիները կը գիտակցին իրենց կոչմանը այս կէտին»:

Ապա ներկայացուց միսիոնարական դաշտը: Նկարագրեց այն Միջագետքը, որ մեծ եղեռնի օրերուն, բազմահազար հայոց սպանդանոցը եղած էր: Յաւագին փափկութեամբ մ'էր որ վերլիշեց տխրահառաչ Տէր-Զօրը, Բասիլ-Այնը, Ճէպէլ Ճիպիսէն: «Բայց ճիշդ այն պատճառաւ որ այնքան Հայ քրիստոնէից արիւնը թափուած է հոն, զայն նկատելու է սուրբ հող մը, ուր Քրիստոսի եկեղեցին պէտք է կանգնի: Հոն տանելու է Աստուծոյ Խօսքին մխիթարութիւնը այն տեղերու հայախօս և քրդախօս հայ բնակորներուն, ու Աւետարանին լոյսը, մահմետական խաւարին տակ հեծող բազմութեան»:

Ապա պատմեց Ճէպիբէի շրջանակին քրդերու մեծ կարիքն ու ծաբաւը: Ծաբաւ կը թուրքեան և Հոգեւոր լոյսի: Քիւրտ մեծաւորներու հետ իր ունեցած տեսակցութեանց պատմութիւնը յայտնութիւններ եղան ժողովին:

Իբր քաջալերանք, վերլիշեց մեր ձերունի եղբօր Ղազար Տէր Ղազարեանի ջանքերն ու յաշտութիւնները այս մարզին մէջ: Եւ իր մաղ-

թանքները բերաւ մեր հայ միսիոնարին զոր-ծունէութեան համար:

Ճառերը կ'ընդմիջուէին ժողովուրդին խանդավառ և Լիոնի երգիչ խումբին անոյշ երգեցողութեամբը:

Ստորագրեալը պաշտօն ունէր անձնական ուղերձ մը բերելու Սամուէլ եղբօր: Անոր կիրարկելով «Անիկա ինծի ընտիր աման մըն է» խօսքը, ցոյց տուաւ թէ ինչպէս նա գիտցաւ որ փրկուած էր ծառայելու համար: Ապա պարզեց անոր մեր միջեւ ունեցած եօթը տարիներու սպասաւորութեան զանազան գիծերը: Յաջողակ Աւետարանիչը, որուն աշխատութիւնները Տէրը կնքած էր, իրեն շնորհելով անմահ հոգիներ: Մասնաշնչեց իր երիտասարդաց մէջ ունեցած գործունէութիւնը, որոնց մէջ յաջողած էր ըլլալ հոսանքն ի վեր ելլող ճշմարիտ երիտասարդը, ու դարձած էր շատերու մեծ եղբայրը ու բարեկամը: Շեշտեց նաև Կիրակնօրեայ դպրոցներու գործունէութիւնը, մանկանց միջեւ թափած իր ջանքերը, Տէր Յիսուսի համար տեղ մը գրաւելու ի խնդիր, այդ մատաղ կեանքերուն մէջ:

Ապա անդրադառնալով իր սպասաւորութեանը մէկ ուրիշ ուղղութեան նշանակեց անոր օգտակարութիւնները իբր ուսուցիչ հայ լեզուին, եւ վերջապէս յիշեց անոր բանաստեղծական տաղանդին տուրքը մեր հայ հոգեւոր մշակոյթին: Ի վերջոյ անդրադարձաւ նաև սպասաւորութեան ընթացքին իր քաջած տառապանքներուն, որոնք բոլորն ալ Աստուծոյ թողատուած էին իր կեանքին սրբացման և խորացման համար:


Ստորագրեալը իր վերջաբանով ճշդեց եկեղեցիներուն դիրքը անոր հանդէպ: «Այս ըլլալով քու պատմութիւնդ մեր մէջ, այսօր մենք կը զրկենք քեզ: Քու յաջողութիւններդ և ցաւերդ մերը պիտի ըլլան: Ֆրանսահայ Աւետ. եկեղեցին իր պանդուխտ միսիոնար զաւակը յիշող մօր մը պէս է քեզի: Գնա՛, բայց նաև կ'սպասենք քեզի որ օր մը պատմես թէ Տէրը ի՞նչ ըրաւ քու մէջդ և քեզմով, միսիոնարութեանդ ժառանգագործի և ծարաւուտ դաշտին մէջ»:

Անմիջապէս յետոյ ձեռնարկուեցաւ մեր եղբօր «Առաքման ձեռնադրութեանը». Գործք. ԺԳ 1-3: Dr. P. Berron և Superintendent M. Ehmann մէկ կողմէն, Վերք. Ժ. Պարսումեան, Յ. Ղազարոսեան, Ա. Փափագեան, Զ. Պուտաքեան եւ Բրօֆ. Գ. Խայիկան միւս կողմէն իրենց ձեռքե-

(Շարունակութիւնը տե՛ս կողքին 4րդ էջը)

ՅԻՍՈՒՄԻ ՓԱՐԱԽԻՆ ՄԷՋ

(Անգլիերէնէ՝ Ն. Մ.)



1 Ինչպէս փոքր ծաղիկներ պարտէզին կուտան
Գեղեցկութիւն ու բոյր, չըքնաղ, աննըման,
Նոյնպէս մանուկներն թող ծաղկին անդադար
Աստուծոյ խնամքին տակ, Յիսուսի համար:

(Կրկ.) Յիսուսի համար թող մեծնան, գօրանան,
Կեանքն ընեն պարտէզ մը չըքնաղ, աննըման,
Նոյնպէս մանուկներն թող ծաղկին անդադար
Աստուծոյ խնամքին տակ, Յիսուսի համար:

2 Աշխարհն պարտէզ մըն է, ծաղկալի, չըքնեղ.
Քաղցըր խօսքեր, գործեր բուրեն ամէն տեղ.
Հոն կը տեսնէ օրհնեալ Յիսուսն ամէն օր
Ծընող, մեծցող մանկունք տեսքով փառաւոր:

3 Տէր Յիսուս կը սիրէ չըքնաղ ծաղիկներն,
Մակայն շատ աւելի սիրէ մանուկներն.
Սիրէ տեսնել զանոնք որ Իրեն համար
Մեծնալով կատարեն Իր կամքն անդադար:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ.— «Բանբեր»ի անցեալ ամսուայ թիւին մէջ «Կը պատկանիմ
Փրկչին» երգին վերնագրին տակ սխալմամբ շարուած էր Գերմաներէնէ
Յ. Ն. Ղ. պէտք է կարդալ. Անգլիերէնէ Ն. Մ.:

ըը դրին ծնրադիր եղբոր վրայ, մինչ վեր. Պարսութեան կ'արտասանէր նուիրման աղօթքը: Ճիշդ յետոյ Աւետարանիչ Կալվին Պարսութեան հոգեպարար շեշտերով մեներգեց իր ձայնազրած ձեռնադրութեան երգը:

Ապա զանազան եկեղեցիներու պատուիրակները բեմ յառաջացան, իւրաքանչիւրը բերելով խոստում մը Աստուծոյ խօսքէն և տալով եղբայրական համբոյրը:

Կարգը միսիոնար Սամուէլ եղբոր էր, որ խիստ յուզուած, սկսաւ իր մանկութենէն: Նա իր երախտագիտութիւնը յայտնեց, իտրեքերդի գերման որբանոցի երբեմնի տնօրէն Mr. Ehmannի և իրենց շէնքին վերակացու մայրիկին, որոնք կանուխէն հոգացած էին զինքն ու Աւետարանը սերմանած իր մատաղ սրտին մէջ:

Ապա իր շնորհակալութիւնը ներկայացուց իր երիտասարդ ընկերներուն, իր հոգեւոր հօրը վեր. Յ. Ն. Ղաղարոսեանի և միսիոնարութեան տնօրէն Dr. P. Berronի: Յետ այնու անցաւ իր վկայութեան: Ներշնչուելով Յովնան Մարգարէին Առաքելութենէն, մեզի ներկայացուց իր ներքին փորձառութիւններէն պատուական խորհրդածութիւններ, որոնցմէ երեքը կ'արժէ յիշել:

Նախնի թշնամեաց վրայ մտածել ոչ թէ վրէժխնդրութեամբ, որ անասնական է, բայց սիրով և ներումի հոգիով, որ Աստուծային է:

Հաւատարմարար ծառայել Յիսուսի նոյնիսկ երբ ջանքը երկար ատեն անպտուղ ըլլալ թուի:

Աստուծոյ կամքին իրազորման սիրոյն գիտնալ յօժարիլ մեծ զոհողութեանց, մինչեւ կեանքը գնելու ծայրագոյն նուիրման:

Վերջին խօսքը կը վերաբերէր Միութեան ժողովի յարգելի հիւրին Superintendent Mr. Ehmannի: Մեր մեծ եղբոր այդ առթիւ մեր միջեւ գտնուիլը լոկ զուգարդիպութիւն մը չէր հարկաւ...

Պատկանելի հիւրը, յուզուած շեշտերով իր ուրախութիւնը յայտնեց այս երեկոյեան համար: Պատմեց թէ ինչպէս միշտ արթնութենէ անցնող Հայ Աւետ. եկեղեցիք, հետամուտ եղած էին մահմետականները Աւետարանելու զործին: Յիշեց Մարաշի, Այնթապի, իտրեքերդի հայ քրիստոնէայ երիտասարդաց ջանքերը: Օրինակ տուաւ դարձի եկած մահմետականի մը, Յովհաննէս Աւետարանեանի միսիոնարական ջանքերն եւ տառապանքները: Մեր միջեւ եղած այս փափաքը առողջ հոգեւորութեան մը նշան նկատեց և քաջալերեց զմեզ շարունակել սոյն հոգիին մէջ:

..

Ուշ ատեն և անպատմելի մթնոլորտի մը մէջ էր որ հանդէսը փակուեցաւ: Ժողովքը խոր տպաւորութեան տակ էր: Ամէնքը յուզուած, օրհնուած, ոմանք արտասուած էին: Ներկաները կարծես ականջով թողուցին սրահը: Հոգեւոր տեսակէտէն ականջատնի է օրուան արժէքը: Մեր սիրելի միսիոնարութիւնն ու եկեղեցիները քայլ մը եւս ընդյառաջ գացին իրենց փառաւորեալ Փրկչին կամքին: Վստահ ենք որ վերը, «Երկնաւոր տեղերու» մէջ բաներ մը «քակուեցան և կապուեցան»: Տէրը շնորհէ որ սոյն երեկոյեան բարերար նպաստը իջնէ այն լքեալ դաշտերու վրայ, ուր օհուձքը ճերմկացած է արդէն:

Զ. Բ. ՊՈՒՏՈՒՅԱՆ

Փարիզ Քարտուղար Հայ Աւետ. Միութեան

ՎԵՐՋԻՆ ԱՂՕԹՄԺՈՂՈՎ Ի ՄԱՐՍԷՅԷ ԵՒ ՄԵԿՆՈՒՄ. — Սամուէլ եղբայր Պաղգալեան իր վազանձէն և կարգ մը այցելութիւններէն վերադառնալով կրկին քաղաքս հասաւ 21 Սեպտեմբերին, և նախադասեց կանխաւ ծանուցուած միսիոնարական Աղօթաժողովին: Քաղաքէն և արուարձաններէն համակիրներու ղեղեցիկ խումբ մը ներկայ էր: Օրհնեալ ժամանակ մը անցուցինք և այդ երեկոյ սկսանք աւելի սիրել մեր քրդախօս եղբայրներն ու Քրդերը:

Սամուէլ եղբայր կը մեկնի 23 Սեպտեմբերին Ալգաւէն հասնող Օր. Beek անուն ուսուցչուհիի մը հետ, որ իր կեանքը հայոց մէջ զործելու ղեղեցիկ պաշտօնին նուիրած է: Մեր աղօթքները կ'ընկերանան անոնց:

ՍՏԱՅԱՆՔ. — «Յուշարձան Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան հազարհինգհարիւրամեակին»

Համառօտագրութիւնն է Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան հազարհինգհարիւրամեակին առթիւ հրատարակուած յօդուածներու և գրքերուն: Ամփոփումը հազարհինգհարիւրամեակի գրականութեան: Արժէքաւոր հատոր մը, որ խիստ դիւրացուցած կ'ըլլայ ապագայ բանասէրին, յօդուածադրին, քննադատին զործը:

Կը շնորհաւորենք Երուսաղէմի Պատրիարքարանին այս ղեղեցիկ ձեռնարկը: Դին 5 Շիլին:

Հասցէ՝ «Sion» A Monthly of Religion Armenian Patriarchate, Jerusalem (Palestine)

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savaournin Marseille